



Պ. ԳԱԿՐԻԼՈՒ

4923

ՅԵԳՈՐԿԱՆ

A $\frac{8}{33\frac{1}{2}}$

ՊԵՏԶՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ
1 · 9 · 3 · 6



891.715
4-32

891-710
9-32

30 MAY 2011 22.12.

Պ. ԳԱՎՈՒԼՈՎ

9.44.

PH
39126

Յ Ե Գ Ո Ր Կ Ա Ն

Նկարները չեն ծաղիկը
Վ. ՇՇԵԳԼՈՎԻ

Ռուսներին պարզապես
Հ. ՀԱՅԲԱՊԵՏՅԱՆ

4923



ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1936

Պատ. խմբ. Ա. Հայրյան
Տեխ. խմբ. Տ. Խաչվանյան
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան



Դրավիտի լիազոր 304, պատվեր 251
Հրատ. 3584, տիրաժ 4000



Հանձնված է արտադրության 25 հոկտեմբերի, 1935 թ.
Ստորագրված է տպելու 10 մարտի, 1936 թ.
Պետհրատի տպարան, II Գնունի № 4



3571-84

П. ГАВРИЛОВ
Е Г О Р К А

Гиз ССР Армении, Эривань, 1936 г.

Յ Ե Գ Ո Ր Կ Ա Ն

Արեգակն աշնքան եր տաքացնում, վոր սոճիների ու լեղև-
նիների վրայի ձյուլթը հալվում եր: Պարզ ու թափանցիկ կաթիլներ-
ըով ձյուլթը հոսում եր ծառերի բնների վրայով:

Զեփյուռը տաք եր ու հոտավետ: Մուգ շագանակագույն բրդոդ
արջուկը կանգնել եր հետևի վոտքերի վրա: Նա շուռ եր ավել իր
լերկարավուն դունչը հաստ վզի վրա դեպի աշն կողմը, վորտեղից
փչում եր քամին:

Արջուկը շատ լավ եր հասկանում, թե չուրաքանչյուր քամի
ինչպիսի հոտ ե բերում: Այ, հենց հիմի քամին անհամ հոտ բերեց
— ալըված անտառի հոտ: Ահա քամին փչեց մյուս կողմից և ավելի
վատ — ծաղիկների ու ձյուլթի հոտ բերեց: Զյուլթ ու ծաղիկ արջու-
կը չեր ուտում, ուրեմն քամին անհամ քամի եր:

Պարզ ե ու հասկանալի:

Հենց աշն ե դայրուլթից արջուկի քիթը կնճռոտվում եր, վոր
քամին ուրիշ հոտ բերեց: Արջուկը մինչև անգամ մըթմըթացրեց:
Այդ ե, վոր կա — մըջյուններ են:

Աշխարհիս լերեսին մըջյունից համեղ բան կարող ե լինել: Ի՞նչ
լավ ե, լերը լերկու թաթդ ել կոխում ես մըջնոցը, ափերդ լիքը
մըջյուն հանում, լցնում բերանդ և սկսում չփչփացնել, չփչփացնել...

Յեվ վորովհետև մըջնոցը տեղից շարժել չի կարելի, այդ պատ-
ճառով ել արջուկն ինքը պետք ե գնա մըջնոցի մոտ:

Պարզ ե ու հասկանալի:

Իսկ մեծ լեղբայրը: Միթե կթողնի վոր նա իր մոտից հեռանա:

Հենց վոր փորձում եր հեռանալ, մեծ լեղբայրը կծում եր և թաթով ամուր զարկում: Որինակ, ինչպես յերեկ, յերբ արջուկն ուզեց թիթեռի յետեվից վազել: Մայր-արջը վաղ առավոտից գնացել եր: Նրան շատ անհանգստացնում էին տալգալից լավող աղմուկներն ու թնդյունները: Նա գնացել եր իմանալու. արդյո՞ք այդ աղաղակները փորձանք չէ՞ն բերի իր յերկու ձագուկներին:

Գնալիս, մայրիկը խիստ հրաման տվավ մեծ արջուկին, հետևել փոքրիկին և նա լեղբորից աչքը չեր հեռացնում:

Ասենք նա միշտ ել խիստ եր:

Ահա նա պառկած՝ յեղենու կոծոծ ե կրծում և ախպես ե նայում, վոր կարծես ուզում եր ասել.

— Գիտեմ, վոր դու չարածձի յես, ուզում ես փախչել: Իսկ ինձ, փոքրիկ, չես խաբի:

Փոքրիկ արջուկն ել պառկեց: Նա գլուխը դրեց առջևի թաթերի վրա և ձևացրեց, թե ինքը հնազանդ ե ու հանգիստ: Նա հանգստանում եր, իր դարչնագույն աչքերով գործվազին նայում ավագ լեղբորը և կարծես պատասխանում.— Դու տեսնում ես, վոր յես հանգիստ պառկել եմ: Յեթե դու գնաս ել, յես այսպես պառկած կմնամ: Հապա փորձիր հեռացիր, հետո արի և կտեսնես, վոր յես այստեղ կլինեմ:

Գլխի ընկած արդյո՞ք ավագ արջուկը թե ինչ ե մտածում իր լեղբայրիկը: Յերևի վոչ, վորովհետև վերջին անգամ փոքրիկի վրա նայելուց հետո, նա վերկացավ ու գնաց:

Փոքրիկին ել այդ եր հարկավոր: Նա սպասեց մինչև վոր թփերի չխկչխկոցը հանդարտվեց, հետո վեր կացավ և վազեց մի կողմից մյուս կողմի վրա ընկնելով: Վազելու ժամանակ նա անդադար գլուխը ցցում եր և վորսում քամին:

Հանկարծ նա մի խուլ դղրդյուն լսեց, վորը նման եր վորոտի: Արջուկը յերկյուղից մտավ մի փոսի մեջ և կպավ գետնին:

Շուտով քամին մի կծու և անծանոթ հոտ բերեց: Ահա ելի, ելի դղրդյուն: Կարծես հսկա յեղենիները տապալվում էին:

Արջուկը վախեցավ: Չորս կողմը անծանոթ տեղեր ելին:

Նա աղիողորմ հեծկլտաց, հետևի թաթերի վրա կանգնեց և թաց դուռնչն այս ու այն կողմը դարձրեց:

— Փշիր, քամի, ցույց տուր հարազատ կողմը:

Այդ ժամանակ մի ահագին բզեզ, մեծ-մեծ բեղերով ու շանչերով, կարևոր գործով ուր վոր թռչում եր: Թռչելու ժամանակ բզեզը իր ծակծրկող շանչերով կպավ արջուկի քթին:

Արջուկը ցավից մոմռաց: Նա պառկեց գետնին և յերբեմն թաթերը քսում եր դնչին, կարծես լվացվում եր, յերբեմն ել աքաղաղի նման յերբ նա կտուցն եր մաքրում քիթը՝ քսում եր գետնին:

Ցավում ե: Իհարկե: Չե՞ վոր բզեզը մեծ բզեզ եր, վախեցավ: Յերբ քթի ցավն անցավ, արջուկը լսեց, վոր կողքին մի ուրիշ բզեզ ե բզբզում: Արջուկը կրկին ամբողջ ուժով վազեց:

Հանկարծ նա կանգ առավ, կարծես պոչը քաշեցին: Մըրջնոցի թթու հոտ դիպավ նրա քթին:

Ահա, համեցեք: Ահա մի ահագին մըջնոց, մըջուկներով լիք: Մըջուկներն առաջ ու հետ են գնում, քաղաքավարի անցնելով իրար կողքից: Նրանք քաշ են տալիս յեղենու ասեղներ, բոժոժներ, վորոնցից մըջուկներ պետք ե դուրս գան: Մըջուկներն շտապում են, վոր տունեղներ փորեն, թրթուրների համար մանկալան պենյակներ շինեն: Մըջուկներից վոմանք բարձրանում էին մըջնոցի կատարը և, վորպես հետախույզներ՝ բեղերն ելին շարժում: Յեվ վոչ մեկը նրանցից չգիտեր, թե ինչ սարսափելի փորձանք ե կախված աշխատավորական մըջնալին քաղաքի վրա:



Հիացմունքից արշուկը մինչև անգամ շրթունքները լիզեց։
Պետք է նախաճաշել։

Պարզ է ու հասկանալի։

Յերկար չմտածելով, արշուկը լերկու թաթն էլ ներս տարավ մըշնոցը։ Մըշուկներն իրար անցան. վորը վաղեց թրթուրներն ազատելու, վորը պատրաստվեց մինչև մահ կռվելու։ Մըշնոցը լեռում էր կարծես։ Բայց արշուկն այս բոլորից չէր վրդովվում։ Նա չփշփացնում էր և շրթունքները լիզում։

Ահ, ինչ թթու լե։ Թթու լե, ուրեմն համեղ է։ Իսկ լեթե համեղ է, դիր բերանդ։

Հանկարծ արշը մազերը ցից-ցից արավ և, ինչպես ֆուտբոլի գնդակ, մըշնոցից հետ ցատկեց։ Անձանոթ սուր ձայները նրան վախեցրին։ Արշուկը պաշտպանվելու համար, առջևի թաթը բարձրացրեց։ Աչքերը պսպղում էին։

— Տղերք, էյ, տղերք։ Այստեղ մի արշուկ է նստած, խկական, կենդանի արշուկ։ Այստեղ լեկեք. շուտ, շուտ։ Շըջապատեցեք նրան։

Իզուր չէր մայր արջն անհանգստանում։ Իզուր չէր վրդովվում, անսովոր աղմուկը և թնդյունը լսելով։ Այդ թնդյունը մարդիկ բերեցին տալգան։ Այստեղ, այս խուլ տեղում, հնգամյա պլանի հա-

մաձայն, պետք է մենտաղ հալելու գործարան կառուցելին։ Շենքի համար տեղ մաքրելով, մարդիկ պայթեցնում էին կոճղերը և ցած գլորում հսկածառերը։ Հոնդում էին տըրակտորները, մոնչում ավտոմոբիլները։ Այս ձայները տալգալի գազանային բնակչությանն անհանգստացնում էին։

Գազանները նահանջեցին տալգայի խորքը։ Մարդիկ,



հարվածալին աշխատանքով զբաղված լինելով, գաղափարներին հետա-
մուտ չեղին լինում: Կոմյերիտական հետախույզների բրիգատը պա-
տահմամբ հանդիպեց արջուկին:

Ախ, արջուկ, արջուկ: Այժմ ո՞վ պետք է պաշտպանի քեզ:
Քո մըթմըթան ավագ չեղբայրը հեռու չէ: Մայրդ՝ ավելի հեռու: Չա-
րաճճի, հիմա քեզ ի՞նչ կանեն, ի՞նչ:

Նոր աղաղակներ լսվեցին: Լսվեց փախչող մարդկանց վոտքե-
րի տակ ճարճատող չոր փայտերի ձայնը:

— Արջը վորտեղ է, Սոնյա, յես իսկույն նրան...

Ակնոցավոր կոմյերիտականը, չտարբերելով, վոր նրա առաջ
փոքրիկ արջուկ է նստած, հրացանի շնիկը բարձրացրեց, հրա-
ցանը դեմ տվավ ուսին և... Արձակեց: Վո՛չ:

Սոնյան ակնոցավոր կոմյերիտականի ուսը հրեց և բարկացած
գոչեց.

— Սպասիր: Ի՞նչ ես անում: Չե՞ վոր նա բոլորովին պատիկ է:
Տես ի՞նչ զվարճալին է:

Սոնյան սկսեց զգուշ մոտենալ արջուկին, մեկնելով նրան իր
ձեռքերը.

— Արջիկ, հաստիկ: Արջիկ, արջիկ, արջիկ...

Այժմ միայն արջուկը հասկացավ, թե ինչ պետք է անի: Իսկ
ի՞նչ անի: Փախչի՞:

Արջուկը փախավ:

Բայց զայրացած ու վախեցած վոր կողմը գնում եր, ամեն տեղ
հանդիպում եր մարդկանց ձեռքերի ու վոտների: Արջուկն աղի-
ողորմ վնգվնգաց: Նա կանչում եր ավագ չեղբորը և արջ մայրիկին:
Այստեղ մի ինչ վոր բան լույսի առաջը կտրեց և վայր գցեց:

Արջուկն զգաց, վոր մի ինչվոր ամուր ու հաստ բանով իրեն
փաթաթում են: Բայց ի՞նչ աներ պատիկը: Կծել դեռ չեր կարո-
ղանում: Նա խփեց Սոնյայի ձեռքին: Սոնյան բացականչեց.

— Ո՛յ, ինչ հիմարն է: Լավ է, վոր դեռ ուժեղ չէ: Դե, այժմ ել
չես կարող կծել: Քեզ, կծանիդ, կփաթաթենք պարուսիների մեջ:

Արջուկը թրպրտաց, ճանկոտեց, բայց վոչինչ դուրս չեկավ:
Ստիպված չեղավ սպասել, թե վերջն ինչ կլինի:



Յերբ Սոնյայի վիրավորված մատը կապեցին, նա հրաման տվավ:

— Տղերք, մի լերկար ձող կտրեցեք: Այժմ զգուշությամբ կծանին բաց թողեք: Առաջ կապեցեք առջևի, հետո հետևի վոտները: Ամուր կապեցեք, բայց աջնպես, վոր չցավի:

Արջուկի թաթիկները կապոտեցին: Ամուր, բայց աջնպես, վոր չցավի:

— Տղերք, այժմ ձողն անցկացրեք արջուկի թաթերի տակ և ձողը դրեք ուսերիդ, հրացանավորները թող առջևից և կողքերից գնան: Մալը արջը կարող է մեր հետքերով գալ, այն ժամանակ մեր բանը լավ չի լինի: Դե, գնանք:

Կոմիտեի անդամները ձողը դրին ուսերին և շարժվեցին դեպի ձամբարը:

— Կեցցես, Սոնյա: Դու ի՞նչ գիտես, թե գերի գազաններին ինչպես են տանում:

— Մեր գլուղում սպանված գայլերին այսպես են տանում: Յես գազանների մասին շատ բան գիտեմ: Միայն թե, տղերք, արջուկն ի՞նչ պիտի անենք:

Կոմիտեի անդամները կանգ առան: Յեվ՝ ճիշտ վոր, արջուկն ինչ պիտի անելին:

— Իսկ չես կասեմ, թե ինչ անենք, — ասաց ակնոցավոր կոմիտեի անդամը. — Վաղը մենք գնում ենք մեր լենթաշեփ կարմիր նավատորմի ղալիսներին մոտ: Յեւեք, տղերք, արջուկին տանենք նավատորմիդ:

— Տանք՝ կարմիր նավատորմի ղալիսներին, — բացականչեցին կոմիտեի անդամները: — Թող այնտեղ արջուկը նրանց ուրախացնի և մեզ հիշի: Արջուկին նավատորմիդ տանենք, նավատորմիդ:

Իսկ արջուկը՝ Համաձայն է արդյոք: Ձեռքից կապված արջուկն որորվում էր, ինչպես դուլը լծակի վրա և վռչին, չեր հասկանում: Տարորինակ էր նրա համար ներքևից վերև, լերկնքին ու սոճինքին նայելը: Կարծես թե ամեն ինչ չքանում էր, չգիտես ուր, իսկ ինքը, արջուկը, մեջքի վրա պառկած էր:

Յեվ այդպես, արջուկը, քիթը վեր ցցած, գնում էր առաջ:


Վաղ առավոտյան կոմիտեի անդամները պատրաստվեցին ձանապարհվելու: Մի փոքրիկ բեռնատար ավտո, նոր բացված բացատով սուրում էր դեպի լերկաթուղու կայարանը:

Արջուկը գնացքից չվախեցավ: Կայարանի ցեմենտե կառամատուցի վրա նստած, թշույց ու թնդչուն էր լսում, բայց թե վորտեղից, չեր հասկանում:

Հանկարծ նրա մոտ թնդչուն, վորոտ լավեց: Արջուկն ելի բան հասկացավ: Վախենալու էլ ժամանակ չունեցավ: Սոնյան նրան ներս քաշեց վագոնը: Արջուկն ուղեց մեկն ու մեկին կծել, բայց բերանը բաց անել չկարողացավ. գլխին կաշվե գնչակալ ելին անցկացրել:

Հանկարծ հատակը՝ վորտեղ արջն էր կանգնած՝ ճոճվեց: Պատուհանից մի այնպիսի սուր հաշոց ներս մտավ, վոր արջուկը, շան ձագի նման, վնգվնգաց: Հետո նա սկսեց ձանձրանալ: Նա իսկից անգամ էլ վնգվնգաց ու կպավ մի մարդու վոտներին: Նա իսկույն զգաց այն լերկոտանի գազանի հոտը, վորին լերեկ անտառում թաթով խփեց, բայց չփնթփնթաց: Սոնյան իր վոտները քաշեց: Նա մինչև անգամ ուրախությունից կարմրեց:

— Տղաներ, — ասաց Սոնյան, — Նա արդեն ինձ ձանաչում է: Կատվի նման կուչ է գալիս: Նայեցեք, ինչպես տխուր է նայում: Վագոնի անկյունում նստած մի միլո-քավոր քեռի հաստ ձալնով ասաց:



— Այժմ դնչակալը կարող եք հանել: Նա ձեզ ճանաչում է, քաղաքացի, ել վնաս չի տա:

Սոնյան զգուշությամբ արջի կաշվե դնչակալը հանեց և վախ՝ վրթելով հետ քաշվեց: Բայց արջուկը չփորձեց ել կծել: Նա բերանը լայն բաց արավ, հորանջեց ու Սոնյայի ձեռքը լիզեց:

Արջուկը չհիշեց, թե քանի ուրից հետո, իրեն վագոնից դուրս հանեցին: Մարդիկ վագոնից թռչում էին, կարծես նրա հետևից վորսորդներ էլին վագոն, ծիծաղում էին, գոռում, ճամբրուկներ էին քաշ տալիս և արջուկին հրում: Բեռնակիրները սալալիները թրխթրխկում էին:

Արջուկն աչքերը կլոցեց: Վագոնի նստարանի տակի մթությունից հետո, արևն այստեղ ավելի պայծառ եր լուսավորում: Իսկ ներքևում, սարի տակ, մի տափակ, մեծ, կապույտ բան կար: Այդ կապույտ բանի մեջտեղով մի մեծ բզեզ եր սողում:

— Ահա, ահա և ծովը: Շողենավ ել ե լողում: Կարելի չէ հենց մեր լենթաշեփ ականանամլն է, հա, տղերք:

Սոնյան չսխալվեց: Արշավանքից վերադառնում եր հենց այն ականակիրը, վորի շեփը պղինձ հալելու գործարանի կոմյերիտականներն էին:

Նավն ականակիր ե կոչվում այն պատճառով, վոր նրա վրա ականային գործիքներ կան: Այդ գործիքները լցվում և արձակվում են ականներով, կամ ինչպես նրանց անվանում են, ինքնաշարժ ստորջրյա ռումբներով:

Ստորջրյա ռումբը մի հաստ ու լերկար պողպատե արկ է: Նրա մեջ շատ պայթուցիկ նյութեր են դրված: Ռումբն ունի իր պտուտակներն ու մեխանիզմները, վորոնք նրան ջրի տակ շարժում են: Ղեկերը ռումբն ուղղում են դեպի նպատակը: Իսկական ջրասույզ նավակ, միայն առանց մարդկանց:

Յեթե բուրժուճներն, այնու ամենայնիվ, հարձակվեն մեր բանվորական լերկրի վրա, այդ ականակիրը և նրա պողպատե լեղբայրները, արագ կընկնեն թշնամու նավերի հետևից և իրենց ռումբերը բաց կթողնեն թշնամու վրա: Ռումբերը կպայթեն, թշնամին ջրասույզ կլինի և մեր ավերին չի հասնի:

Ահա այդպիսի ականակիրի վրա պետք է ապրեր արջուկը, լեթե միայն, իհարկե, ականակիրի հրամանատարը թուլատրեր:

Յեթե յուրաքանչյուր կարմիր նավատորմիդային, վորը շուն, վորը գալլի ձագ, վորը արջուկ, վորը հավ բերեր, ապա ռազմանավ չեր լինի, այլ գազանանոց:

Ահա ականակիրը խարխիս գցեց ու կանգնեց:

Կոմյերիտականները նեղ նավասանդուղքով նավը մտան: Արջուկը կասկածելի կերպով եր նայում մարդկանց վտառի տակ տատանվող սանդուղքին ու հետ-հետ եր գնում: Սոնյան նրան ձեռքերի մեջ առավ:

— Դե, դե, ծովագնաց դառնալու լես գնում, իսկ ջրից վախենում ես: Խնդրում եմ, վոր մեզ չխայտառակես:

Հերթապահ կարմիր նավատորմիդայինը կոմյերիտականներից անցաթուղթ ուղեց:

— Ինչպես թե, — ասաց նա, — անցաթուղթը լերեք հոգու համար ե, իսկ դուք չորս եք:


Կոմյերիտականները զարմացած իրար լերեսի նայեցին:

— Ինչպես թե չորս: Մենք լերեք ենք, մեկ, լերկու, լերեք...

Այդ ժամանակ արջուկը փնփնթաց և շղթան, վորից բռնել եր Սոնյան, քաշեց: Կարմիր նավատորմիդայինը ծիծաղեց և ցույց տվավ արջուկին. — Ահա և չորրորդը... Յես հանաք արի: Մի բուրդ սպասեցեք, լես հրամանատարին կգեկուցեմ: Գազանի մասին ել կգեկուցեմ: Անունն ի՞նչ է: Դուք դրան մեզ մոտ եք բերել, թե հետ պիտի տանեք:

Կոմյերիտականները պատասխանեցին. — Արջուկը դեռ անանուն է: Մենք ձեզ համար նվեր ենք բերել:

Կարմիր նավատորմիդայինը վագեց զեկուցելու: Շուտով նա հերթապահ հրամանատարի հետ վերադարձավ:



Հրամանատարը շնորհավորեց կոմյերիտականների գալուստը և հրավիրեց ընդհանուր նավասենյակը:

Արջուկն այս ու այն կողմ չնայելով, քարշ եր գալիս Սոնյայի լետիկից և խոփոռել եր: Նրան դուր չեւ գալիս, վոր այնքան մարդ ե նայում իրեն և մատով ցուցց տալիս:

Նավի բոլոր անկյուններում լուր տարածվեց, վոր շեֆերը յեկել են և մի ինչ վոր գազան են բերել: Մեկն ասում եր — գայլ են բերել, մյուսը թե՛ գոճի, յերրորդը թե՛ միբուքավոր այծ: Իսկ կարմիր նավատորմիդային Ուկլեյկինը, վորը նավի ամենաուրախ յերիտասարդն եր, բոլորին համոզում եր, վոր կոմյերիտականները կոկորդիլոս են բերել:

Դեռ ընդհանուր նավասենյակին հասած-չհասած, բոլոր կողմերից կարմիր նավատորմիդայինները նրանց շրջապատեցին, կարմիր նավատորմիդայիններն ուզում ելին լսել նոր գործարանի մասին և պատմել թե ինչպես շեշտակի յեն խփում ականակիր նավի ականային գործիքները:

Յերկար ու բարակ կխոսելին կարմիր նավատորմիդայինները կոմյերիտականների հետ, բաց նավի կոմիսարը դուրս յեկավ և ասաց. — Ընկեր կարմիր նավատորմիդայիններ, խնայեցեք մեր հյուրերին: Նրանք գնացելից իջել են և ուղիղ մեզ մոտ յեկել: Հոգնած են: Յերի, ուտել են ուզում: Յերեկոյան ժողով կլինի — կխոսենք, կհարցնենք, կպատմենք:

Յեվ կոմիսարը կոմյերիտականներին տարավ ընդհանուր նավասենյակը: Ներս մտնելիս, Սոնյան արջուկին կապեց մուտքի մոտ:

Փողհարը նվագեց ճաշի ազդանշանը: Կարմիր նավատորմիդայինները վազեցին իրենց սենյակները ճաշելու: Նավի խոհարար Գլեբկոն ամանների մեջ համեղ բորշ լցրեց:

Արջուկը մենակ մնաց: Նա շուտ-շուտ նայում եր ընդհանուր նավասենյակի տանը և փորձում եր վզկապը հանել:

Կարմիր նավատորմիդային Ուկլեյկինը բոլորից շուտ ճաշեց և սենյակից դուրս յեկավ, Վորտեղից վոր ե, մի հին ափսե գտավ, մեջն արգանակ լցրեց, հաց բրդեց:

Նրան թվաց, թե արգանակը տաք ե: Արգանակի մեջ սառը ջուր լցրեց, հետո ել շաքար գցեց: Ստացվեց վոչ թե արգանակ, այլ մի ինչ վոր անհամ բան:

Ուկլեյկինն ափսեն դրեց արջուկի առաջ: Արջուկն սկսեց զգուշությամբ լակել: Դուր չեկավ: Փռթկացրեց: Հասավ շաքարին: Մի կտոր կրծեց: Բերանը չփչիացրեց: Շրթունքները լիզեց: Մի կտոր ել կրծեց: Ու մին ել վորջ կերակուրը շող տվեց տախտակամածի վրա: Շատ բարկացավ — ել ամանում շաքար չկար:

Կարմիր նավատորմիդայինները, ճաշելուց հետո, սենյակներից դուրս յեկան, վազեցին վերին տախտակամածը, վոր արջուկին տեսնեն: Մի ծիծաղ եր, վոր: Տեսան, վոր շաքարը արջուկին դուր ե յեկել, ելի բերին: Ամեն մեկը մի կտոր բերեց — արջուկին այդքան շաքարը մի ամիս բավական եր:

Արջուկը թաթե բով շաքարը կիտեց, խեթ-խեթ նայեց կարմիր նավատորմիդայիններին ու փնթփնթաց — չլինի թե խլին:

Հենց այստեղ եր, վոր մի դեպք պատահեց:

Կարմիր նավատորմիդային Ուկլեյկինը փսփսաց.

— Սպասեցեք, տղերք, յես իսկույն խոհարար Գլեբկոյին կխաբեմ:

Նավի խոհանոցը կոչվում ե, կամբուզ: Խոհարար Գլեբկոն կամբուզում նստած ուրախանում եր, վոր այսորվա ճաշը համեղ ե: Ճաշով զբաղված լինելով, նա արջուկի մասին վոչինչ չգիտեր:

Գլեբկոն ուրիշ տեսակ խոհարար եր: Նա մի անդրադետ գլուղացի տղա յեր, վոր նավատորմիդ յեկավ: Յերբ յեկավ ու տեսավ, թե ինչպիսի տեխնիկա կա նավում և ինչքան բան պետք ե իմանալ այդ տեխնիկան կառավարելու համար, միանգամից սկսեց սովորել:

Հրամանատարները և կարմիր նավատորմիդայինները նրան ոգնեցին և այդ ողնության համար Գլեբկոն խոստացավ վոչ թե միայն լավ կերակուր յեփել, այլև մեքենավարի քննություն տալ:

Խոհարար Գլեբկոն մի գործ ել ուներ. սիրում եր ջութակ նվագել: Վորովհետև Գլեբկոն ուրախ յերիտասարդ եր ու յերբեք չեւ տրտնջում, այդ պատճառով ել նրա ջութակն այնպես լավ և

ուրախ եր հնչում, վոր լեթե ծովի ձկները պարել գիտենային, կպարելին:

Կարմիր նավատորմի ղալին Ուկլեյկինը վաղեց կամբուզը և գոչեց.

— Խոհարար, ընկեր Գլեբկոն, շուտ արի միս ընդունիր: Խոհանոցի համար շատ լավ միս են բերել:

Խոհարար Գլեբկոն խոսք լսող ու կատարող կարմիր նավատորմի ղալին եր: Ինչպես հարկավոր եր, նա պատասխանեց «լեւտ» և խոհանոցից դուրս վաղեց: Տեսավ, վոր կարմիր նավատորմի ղալինները խոնավել են, սկսեց նրանց դես ու դեն հրել.

— Ճանապարհ տվեք, ընկերներ: Մսին հիմի մի նայեք, ալլ այն ժամանակ, լերը նրանից արգանակ և բիֆշտեքս կպատրաստեն: Ճանապարհ տվեք:

Կարմիր նավատորմի ղալինները ճանապարհ տվին ու ծիծաղեցին:

— Շուտով արգանակի միսը վերցրու, ընկեր խոհարար, թե չե կհոտի:

Խոհարար Գլեբկոն տեսավ, վոր արգանակի միսը 'նստած' իր վրա լե նայում ու շաքար խժուում:

Գլեբկոն ուզում եր բարկանալ, բայց վոր տեսավ հանաք են արել, ինքն ել սկսեց նրանց հետ հեհուալ:

— Եհե, — ծիծաղից թուլացավ խոհարար Գլեբկոն, — ես վոնց ե միսը շաքար խժուում: Դե, լես իսկույն նրա համար մի համեղ բան կբերեմ:

Խոհանոցում բանկալի մեջ խտացրած քաղցր կաթ կար: Գլեբկոն վաղեց, բանկան բերավ ու արջուկի քթի տակը կոխեց: Արջուկը քիթը կոխեց բանկալի մեջ, բայց բանկալի ատամնավոր կողքերը ծակծկեցին և նա բանկան թաթով դեն շարտեց:

Բանկան գլորվեց և քաղցր կաթը թափվեց տախտակամածի վրա:

Արջուկը մոտեցավ, լիզեց, — տեսավ, վոր քաղցր ե: Մի բոպե չանցած, արջուկն իր լեզվով կաթն ախպես մաքրեց, վոր վոչ մի ավելով ալդպես չեր կարելի մաքրել: Հետո բանկան թաթով հրեց,

նստեց հետևի վոտները վրա, իսկ առջևի վոտներով բանկան շուտովեց գլխի վրա: Կաթը թափվեց նրա քթի, աչքերի, վորի վրա:

Կարմիր նավատորմի ղալինները ծիծաղից թուլացան, իսկ արջուկը կաթը ծծում եր ու շրթունքները լիզում: Գլեբկոն ուրախութունից մինչև անգամ ծափ տվեց և գոչեց.

— Ի՜նչ հասկացող գազան ե: Բայց անունն ի՜նչ դենեք: Այդ ժամանակ կարմիր նավատորմի ղալին Ուկլեյկինը մոտեցավ արջուկին և փորձեց բանկան խլել: Արջուկն ել ավելի սեղմեց բանկան թաթերի մեջ, կեղտոտ դունչը դեպի կարմիր նավատորմի ղալինները դարձրեց և մռնչաց.

— Յո-խխո-ուու...

Կարմիր նավատորմի ղալին Ուկլեյկինը զարմանքից աչքերը չռեց: — Ընկերներ: Ախր նրա անունը Յեգորկա չե, լսեցի՞ք: Նա ինքն ասաց:

Այդ ժամանակից արջուկը կոչվեց Յեգորկա:

Յերեկոյան նավում ժողով կար: Ժողովում կոմիտեի ատականները պատմեցին իրենց գործարանի մասին, կարմիր նավատորմի ղալիններն իրենց ակնհայտի նավի, վարժական հրաձգության, լավագույն հարվածալինների մասին:

Յեգորկան ել կար ժողովում, միայն թե նա, իհարկե, վոչինչ չեր հասկանում: Հանգիստ ու տխուր պառկել եր: Նրա փոքրիկ աչքերը մթազնում ելին, ինչպես ապակյա ուլունքները խոնավությունից:

Յեգորկա—2



3571-84

Խոհարար Գլեբկոն գլուխը թափահարում էր և կամաց շոյում Յեգորկային:

Յերբ ժողովը վերջացավ, խոհարար Գլեբկոն ձայն խնդրեց.

— Յես ուզում եմ ասել, վոր շնորհակալ ենք կոմյերիտականներին, վոր մեզ համար արջուկ են բերել: Միայն թե մեր Յեգորկան հիվանդացել է: Իսկ ինչո՞ւ չե Յեգորկան հիվանդացել: Վորովհետև Յեգորկայի ստամոքսը խանգարվել է: Իսկ ինչո՞ւ չե Յեգորկայի ստամոքսը խանգարվել: Վորովհետև կարմիր նավատորմի ղալխիներն ինչ ասես Յեգորկայի ունեն ելին կոխում: Յերկու կարմիր նավատորմի ղալխին, ամոթ նրանց, ահա թե ինչ ելին մտածել: Վիճեցին, թե շաքարը վոր մեքենայի լուղի մեջ թաթախենք, Յեգորկան կուտի: Յեգորկան, իհարկե, անգիտակից գաղան է: Նա, իհարկե, լուրջոտ շաքարը լափեց: Հիմի Յեգորկայի քիթը չոր է ու տաք, փորըն էլ թմբուկի պես ուռել է: Յես խնդրում եմ, վոր Յեգորկան տաք ինձ, վոր դաստիարակեմ:

Յեգորկան ծանոթ հոտ զգաց: Կարմիր թաշկինակը փայլկոտեց նրա գլխին: Սոնյան մնաս բարով եր ասում նրան, բայց Յեգորկան վոչինչ չեր հասկանում: Նա աչքերը փակեց և սկսեց արագ-արագ շնչել:

Ամբողջ նավը արջուկ Յեգորկային հանձնեց խոհարար Գլեբկոյին, վոր դաստիարակի:

Քիչերվա գնացքով կոմյերիտականները գնացին իրենց նոր կառուցվող գործարանը:

Նավը լերեք ու հանգստացավ: Նա պետք է մասնակցեր ռազմափորձերին, ապա լերկար-լերկար ժամանակ ծովային արշավանք պիտի կատարելին:

Նավը ընդունում էր ռումբեր, ծովային ականներ, վառելիք, կաթնամթերի համար ջուր, և սննդամթերք: Հրամանատարներն ու կարմիր նավատորմի ղալխիները լեռանդով կովի ելին պատրաստվում:

Շիշտ է, իսկական թշնամիների դեռ չեին սպասում: Հրաձգություն պիտի լիներ, բայց վաչ մարտական ռումբերով:

Խորհրդալին բոլոր նավերը, ստորջրյա նավակները և հիդրոպլանները պետք է բաժանվելին լերկու մասի. մի մասը պետք է «կապույտներ» կոչվելին, մյուսը՝ «կարմիրներ»:

«Կապույտները» պետք է հարձակվելին, իսկ «կարմիրները» պաշտպանվելին:

Կռիվը ցույց կտար, թե վոր նավերն են պաշտպանության համար լավ պատրաստվել և վորոնք մի քանի բան դեռ չեն կարողացել սովորել:

Յերկրորդ ուր «կապույտներին» նավերը գնացին: Մի ուրից հետո նրանց հանդիպելու կգնան «կարմիրները»:

Ճակատամարտը տեղի կունենա, բաց ծովում:

Խոհարար Գլեբկոն շատ հուզված էր: Նա խղճում էր, վոր Յեգորկային մենակ թողնի, այն ել հիվանդ վիճակում:

Յեգորկան պառկած էր ափին, արկղի մեջ: Արկղի հատակին խոհարար Գլեբկոն փափուկ լաթեր դրեց, ուտելիք ու խմելիք բերեց: Արջուկն արտասովոր, մթաֆնած աչքերով նայում էր խոհարար Գլեբկոյին և հանդարտ տնքում:

Յեգորկայի փորն ավելի ու ավելի լեր պնդանում: Խոհարար Գլեբկոն այնպես հուզված էր, վոր մոռացավ արգանակի մեջ աղ դցել և կատրեաներն այրեց:

Յերեկոյան, աշխատանքը վերջացնելով, խոհարարը լեկավ, նստեց արկղի մոտ և ասաց.

— Յեգորուշկա, շուտով առողջացիր, ապա թե վոչ, մենք առանց քեզ ծովը կգնանք: Այստեղ ո՞վ կխնամի բեզ:

— Դու դեռ լաց ել լեղիր: Դանի վոր մարդը հիվանդ է, պետք է նրան բժշկի մոտ ել տանել:

Խոհարար Գլեբկոն շուտ լեկավ ու տեսավ կարմիր նավատորմի ղալխին Ուկլեյկինին:

— Գլեբկո, վաղիր բժշկի մոտ: Ասա, վոր Յեգորկայի փորն ողապարիկի նման ուռել է, հենց են է կպլվի: Դե լավ, դու նստիր, լես ինքս կվազեմ:

Նավի բժշկը Յեգորկայի համար մի սրվակ լուծողական տվեց և ասաց.

— Իզուր հիվանդի մասին շուտ չեք գեկուցել: Հիմի նա առող-
ջացած կլիներ: Ափսոս, վոր լուսամարգի չունենք: Ազատության
մեջ, անտառում, արջերը լուծողականի փոխարեն լուսամարգի յեն
գործածում:

Կարմիր նավատորմիդային Ուկլեյկինը լուծողականը բերեց:
Խոհարար Գլեբկոն Յեգորկայի դունչը սեղմեց և լուծողականը —
բո՛ւլ, բո՛ւլ, բո՛ւլ, հոսեց արջուկի հիվանդ ստամոքսը:

Յեգորկան կարծես հասկանում եր իր ոգուտը. մինչև անգամ
չբարկացավ: Միայն խոր հառաչեց ու լռեց:

Անավտոյան խոհարար Գլեբկոն վաղեց սննդամթերքներ պատ-
րաստելու: Կարմիր նավատորմիդային Ուկլեյկինը վաղեց կամրջի
վրայի ազդանշանի պարագաներն ստուգելու: Նավի վրա անգործ
թափառող չկար: Վոչ վոք չեր ուզում ընկերներին հետ մնալ:

Նավը գիշերն ել չի քնում, արավել ևս դորախաղերից առաջ:

Մյուս ուրը լուսաբացին, խոհարարը վաղեց իր հիվանդին տես-
նելու, և... քիչ մնաց՝ շութակ նվազեր ուրախութունից. Յեգոր-
կան վոչ միայն բոլորովին առողջ եր, այլև արդեն սկսել եր արկ-
ղը կրծել, վոր դուրս գա: Նրա քիթը թաց եր ու սառը, ինչպես
հարկավոր ե: Յեգորկան ուրախ նայեց խոհարար Գլեբկոյին և
գնդակի նման արկղից դուրս պրծավ:

— Դե, Յեգորկա, հիմի վազենք նավը: Արի վազենք, տեսնենք
ով ում առաջը կկտրի: Դե, արագ:

Յեգորկան սկզբում կամաց-կամաց, կաղե կաղ եր գնում: Ար-
ջերը վազելիս մին ձախ, մին աջ վոտների վրա լեն հենվում, այդ
պատճառով ել աջնպես ծիծաղելի կերպով ուրբում են, վոր կար-
ծես կուշտ բադիկներ լինեն: Հետո Յեգորկան սկսեց քառատրոփ
վազել և Գլեբկոյից առաջ անցավ:

Նավում Յեգորկային և Գլեբկոյին կարմիր նավատորմիդային-
ները հանդիպեցին ուրախ աղաղակներով:

Կարմիր նավատորմիդային Ուկլեյկինը մոտեցավ Յեգորկային,
ուռա կանչեց, արջուկին ձեռքերի վրա վերցրեց և վզին կարմիր
բանա կապեց:

Կարմիր նավատորմիդայինները հանաքով ասում ելին.

— Դե վոր Յեգորկան չեկել ե նավը, ուրեմն ծով դուրս գալու
ժամանակ ե:

Յեվ խսկապես, հնչեցին հերթապահների սուլիչները և հրաման.

— Բոլորը թող հավաքվեն վերև: Խարիսխը քաշեցեք:

Այն մեքենան, վոր խարիսխը քաշում ե ծովի հատակից, աշ-
խատեց: Խարիսխի ճոպանը, ինչպես հաստ, թաց ոձ, սկսեց դուրս
սողալ:

Կարմիր նավատորմիդայինները, հրշեջների նման կաշե փողե-
րի միջոցով խարիսխի ճոպանի վրա շուր ելին լցնում, վոր նավի
մեջ կեղտ ու ջրաբույսեր չթափվի:

Ահա լերեաց ծանր խարիսխը, վողջ խոտաբույսերով ու կավով
ծածկված: Յեվ, ինչպես իր տանը, ծովի խորքում, խարիսխի վրա
նստած եր մի մեծ խեցգետին:

Խեցգետինը նստած եր խարիսխի վրա և չան-
չերը շարժում եր: Նրա վողջ տեսքն կարծես
ասում եր. «Դե, տղերք, մի նավի վրա դրեք ինձ,
չես ձեզ բոլորիդ ցույց կտամ»:

Կարմիր նավատորմիդային Ուկլեյկինը խո-
րամանկությամբ քաջ խեցգետնին խարիսխի վրա-
լից վերցրեց և դրեց տախտակամածի վրա: Աշ-
խատանքով զբաղված լինելու պատճառով, կար-
միր նավատորմիդայինները Յեգորկային մոռա-
ցան: Տախտակամածի վրա թափառելիս, Յեգոր-
կան հանդիպեց խեցգետնին:

Մտահոգված Յեգորկան սկզբում անշարժ
նայում եր այդ մեծ բզեզի վրա, հետո պտտեց
նրա չորս կողմը և թաթով խփեց:

Խեցգետնին սկսեց փքվել, չանչերը բաց
արավ: Յեգորկային այդ դուր լեկավ: Նա մի ան-
գամ ել թաթով խփեց:

Հսկ. Խեցգետնի չանչերը չփախան և Յե-
գորկայի թաթը ճզմեցին:



Վոչ աշնքան ցավից, վորքան չերկուղից, Յեգորկան վոռնաց, սկսեց չերեք վոտի վրա թռչելով դեռ ու դեն ընկնել: Վազում եր, խեցգետնին ել հետը տանում:

Յերկար ժամանակ Յեգորկան այդպես կվազվզեր, բայց բարեբախտաբար պատահեց ավագ նավաստու ծուռտիկ վոտներին: Ավագ նավաստին խեցգետնի շանչերը բաց արավ, խեցգետնին ծովը գցեց և մատով Յեգորկային սպառնաց.



— Հենց այդպես ել պետք եր, թափառական: Այսուհետև իմացիր, վոր աշխատանքի ժամանակ վագելն արգելված ե:

Նեղացած Յեգորկան գնաց դեպի ծանոթ ձայնը, մտավ խոհանոցը և ընկավ ուղիղ խոհարար Գլեբկոյի դոգը: Խոհարարն ու չերկու կարմիր նավատորմիղային կարտոֆիլ ելին մաքրում:

Հանկարծ մի սարսափելի վոռնոց լսեց և վողջ նավը դողդոգաց: Ծով դուրս գալով, նավը շոգեշշակի ձայնով մնաս բարե եր ասում իր հարազատ ավերին: Նավի մեքենաներն սկսեցին աշխատել, առաջվանից ավելի բարձր հնչեց շոգեշշակը: Յեգորկան չերկուղից խրտնեց և ընկավ աշն տաշտը, վորի մեջ կարտոֆիլն եր:

Խոհարար Գլեբկոն իր սանի ականջներից բռնեց ու դուրս հանեց: — Դե, դե՝ մի վախենա, սովորիր, Յեգորկա: Իսկական ծո-

վային բնակիչ լեղիր: Զե՛ վոր դու կարմիր նավատորմիղում առաջին արջ — կարմիր նավատորմիղային ես:

Յերբ չերորդ անգամ շոգեշշակը հնչեց, Յեգորկան չվախեցավ այլ միայն գլուխն իջեցրեց:

Խոհարար Գլեբկոն ծիծաղեց.

— Այ, հիմի կեցցես: Ծուռտով ավելի սարսափելի գործեր կլինեն:

Նավը բաց ծով դուրս չեկավ: Մայր մտնող արեգակի հսկա կարմիր գունդը հանդարտ սահում եր դեպի հորիզոնի հետևը: Ծովը սիրալիր եր, լավ և կարծես նավին կանչում եր առաջ, առաջ:

Նավը կովելու պատրաստ եր, լողում եր զգուշ և առանց լուսավորութան: Կարմիր նավատորմիղայինները լուռ կանգնած ելին իրենց մարտական դիրքերում: Յուրաքանչյուրը նրանցից շատ լավ գիտեր, թե ինչ պետք ե անել, չերբ կվորոտա «Մարտական տագնապ» ազդանշանը:

Նավը գնում եր միանալու կարմիրների մյուս նավերին, վոր պեսզի բոլորը միասին հարձակվեն թշնամու վրա:

Հրամանատարը նստած եր ընդհանուր սենյակում և նայում եր քարտեզին: Նա սպասում եր իր ոգնականներին, վոր միասին քրնհարկեն կովի պլանը:

Յեգորկան խոհանոցում նստելուց ձանձրացավ և գնաց տախտակամածի վրա թափառելու: Մթության մեջ նա հանդիպեց ինչ տակամածի վրա թափառելու: Մթության մեջ նա հանդիպեց ինչ տակամածի վրա թափառելու: Մթության մեջ նա հանդիպեց ինչ տակամածի վրա թափառելու:

Մի բաց դուռ տեսնելով, շեմքի վրայից թռավ, կաղեկաղ անցավ միջանցքը և մտավ ընդհանուր սենյակը: Յեգորկան անցավ փափուկ գորգի վրայով, բարձրացավ կաշվե բազմոցի վրա և նստեց նավի հրամանատարի կողքին:

— Ոհո, — զարմացավ հրամանատարը: — Այստեղ հենց դու ելիր պակաս:

Յեգորկան խեթ-խեթ նայեց հրամանատարի վրա:

— Յոռ-խ-խոր...

Հրամանատարը ծիծաղեց.

— Ի՞նչ ես ասում: Վոչինչ չեմ հասկանում: Յեռ հարցնում եմ. ի՞նչ ես ուզում:

Իսկ Յեգորկան, թե.

— Յոռ-խխ-ոոորը...

Ու մեկ ել — թրբի, թաթով խփեց հրամանատարի վոտին: Հրամանատարը ծիծաղից թուլացավ:

— Ահա թե դու ինչպիսի արջուկ ես: Կովե՛լ ես ուզում: Դե, ի՞նչ ես ուզում:

Յեգորկան կռիվը շարունակեց, առաջվանից ավելի շատ բարկացավ:

Հայտնի չե, թե ինչքան ժամանակ կհայհոյելին իրար հրամանատարն ու Յեգորկան, լեթե ներս չմտներ կարմիր նավատորմի զային Ուկլեյկինն ինչ վոր բանի մասին զեկուցելու:

Հրամանատարն ուշադրությամբ լսեց նրան, ապա ասաց.

— Ընկեր Ուկլեյկին, դուք չգիտե՞ք, թե ինչու չե այս ծոռոտանին ինձ նեղում:

— Ընկեր նավի հրամանատար, թույլ տվե՛ք ասել: Հարցը շատ պարզ է: Յեգորկան շաքարամանի շաքարը տեսնում ե և պահանջում, ուրեմն, վոր դուք նրան շաքար տաք: Յեվ վորքան շուտ, այնքան լավ:

Հրամանատարն ավելի բարձր ծիծաղեց, հետո ընտրեց ամենամեծ կտոր շաքարը և տվեց Յեգորկային:

Յեգորկան իսկույն հանգստացավ, շաքարը բերանն առավ, բազմոցի վրայից իջավ և կաղեկաղ դեպի դուռը գնաց: Դռան մոտից բարկացկոտ հայացքով նայեց հրամանատարին, կարծես ուզում եր ասել.

— Չկարողացա՞ր իսկույն գլխի ընկնել: Դեռ նավի հրամանատար ել ես:

Յեվ գնաց փնտռելու խոհանոցի ճանապարհը: Խոհարար Գլեբկոն ել Յեգորկային եր փնտռում: Նա արջուկին վերցրեց ձեռքերի վրա և տարավ խոհանոցը:

— Ի՛հ, նստիր այստեղ, Յեգորկա: Նստիր ու մի վախենա: Շուտով մի այնպիսի վորոտմունք կբաճրանա, վոր պետք է ականջներդ փակես: Ի դեպ, լես քո ականջները կփակեմ: Մի բար-

ձանա, բժիշկն է հրամայել, թե չե, ասում է, Յեգորկան սովոր չե, կարող է խլանալ:

Խոհարար Գլեբկոն Յեգորկայի ականջները բամբակով փակեց, խոհանոցի դուռն ամուր ծածկեց ու գնաց: Յեգորկան ել տեղավորվեց իր անկյունում:

Իսկ նավը սլանում եր: Սլանում եր և նրա կողքից ու հետևից վազում էլին իր պողպատյա լեզբայրները:

«Կարմիրների» բոլոր նավերը հավաքվեցին միասին:

Կովեյուս համար ամեն ինչ պատրաստ եր: Թնդանոթները և ականային մեքենաները լցված էլին:

Սև լերկնքից աննկատելի կերպով փախան և՛ լուսինը, և՛ աստղերը: Ծովն ել սևացավ և այլևս ցերեկվա պես հանդարտ չեր:

Քամին փչեց, ալիքները դես ու դեն քշեց: Ալիքները զարկում էլին նավին, գլորվում տախտակամածով, մարդկանց վայր զցում:

Կարծես չուղենալով, հանդարտ զարթնում եր արշալույսը: Յերկնքում հոնդացին «կարմիրները» հիդրոպլանները: Նրանք թռչում էլին հետախուզելու «կապույտների» ուժը և նավերի թիվը:

Նավը սաստիկ տատանվում եր:

Նավի հետ միասին տաք խոհանոցում տատանվում եր նաև ծոռոտանի ծովագնացը: Յեվ նա սկսեց ննջել: Նրան թվաց, իբրև թե, ինքը նավում չե, այլ անտառում, վորջում, արմատահան արթե, ինքը նավում չե, այլ անտառում ամպրոպ է: Անտառում ված ծանոթ լեզենու մոտ: Իսկ անտառում ամպրոպ է: Անտառում անձրևն սպառնում է, թե վորջը ջրով կը քամի լե: Անտառում անձրևն սպառնում է, թե վորջը ջրով կը լցնեմ:

Յեգորկան վախեցավ, վեր թռավ, չորս վոտի վրա կանգնեց ու տեսավ, վոր վոչ մի անտառ չկա, խոհանոցումն է: Իսկ խոհանոցում սառ և աղի ջուրն ալեկոծվում է: Յեվ մեկը Յեգորկային վերև, ներքև և այս ու այն կողմն է գցում:

Յերբ Յեգորկան ննջում եր, ալեկոծությունն ավելի ու ավելի լեղ ուժեղանում:

Ալիքները նմանվում ելին հսկա սև արջերի: Նրանք ծովի վրա այս ու այն կողմն ելին վազվզում, կուրծքները դեմ տալիս ակա- նանավին, սողում ելին տախտակամածի վրա, ջրի կաթիլները խփում ելին մարդկանց լեռեսին, վռոնում ելին, մռնչում:

Կարմիր նավատորմի ղալինների և հրամանատարների համար ծանր եր: Տախտակամածի վրայով անցնող մարդկանց ալիքները վալը ելին գցում, ճնշում, տրորում:

Նավասենյակում լեղած նստարանները, զրքերը, գավաթներն ընկնում ելին և գլորվում տախտակամածով:

Առանձնապես ծանր եր այն կարմիր նավատորմի ղալինների համար, վորոնք գտնվում ելին մեքենայական բաժնում, հնոցների մոտ, քիչ եր մնում հնոցների շիկացած բերանների մեջ ընկնեն:

Ծանր եր կարմիր նավատորմի ղալինների համար, սակայն մեր ծովագնացները քաջ են ու համբերատար: Զնայած փոթորկին և աատանման, մեքենաներն անընդհատ աշխատում ելին, ականալին գործիքները և թնդանոթները կովելու պատրաստ ելին:

Ահա ականանավի ազդանշանորդները խավարի մեջ նկատեցին լույսերի բռնկում: «Կապուլտ» նավերը խոսակցում ելին իրար հետ:

Կարմիր Նավատորմի ղալինները ծովին ու մրրիկին սովոր ելին: Դրա փխարեն Յեգորկայի դուռթյունը վատ եր: Սկզբում նա դժ- գոհում եր նրանից, ով առանց ամաշելու իրեն մի կողմից մլուա կողմն եր գցում: Յեգորկան չեր հասկանում, թե սա ծովի ալիք- ների տատանում ե:

Խոհանոցի իրերն ել շարժվեցին և ընկան Յեգորկայի վրա: Յե- գորկան թաթերն այս ու այն կողմն եր թափահարում: Թրժիկ — դուլլին, թրամփ — սեղանին: Մի անգամ ել սխալմամբ իր փորին խփեց:

Յեգորկան հասկացավ, վոր պետք ե խորամանկությամբ կովել: Հանգիստ նստեց ու սպասեց, վոր թաթի տակ մի բան ընկնի: Ահա մի բանկա գլորվեց: Յեգորկան — թրախկ:

Բանկայի խուլիը թռավ և պղպեղը թափվեց Յեգորկայի քթի և աչքերի մեջ:

Հոլի պես պտտվում եր Յեգորկան խոհանոցում, կարծես իր պոչն եր ուզում բռնել:

Փռչում եր, աչքերը տրորում:

Վոչ, լեռի թշնամուն հաղթել չի կարող:

Յեգորկան մագլցեց նստարանի վրա, պառկեց ու ելի ննջել սկսեց: Յեվ կրկին լեռագում իր վորջը: Նորից ամպրոպ: Անձրև, անձրև:

Հանկարծ վորոտաց, կայծակը փալատակեց և այնպես ուժեղ, վոր Յեգորկան իր լեռկամյա կյանքում չեր լսել:

Յեգորկան դարթնեց ու գնդակի պես վեր թռավ:

Իհարկե, Յեգորկան չեր կարող հասկանալ, վոր վոչ թե ամպն ե գոռում, այլ ականակիր թնդանոթները համազարկ են տալիս «կապուլտների» նավերին:

Այն ժամանակ, լերը Յեգորկան կովում եր դուլլերի հետ և ննջում, «կարմիրների» ականակիրները հարձակվեցին «կապուլտ» նավերի վրա:

Այն ականակիրը, վորի մեջ նստած եր Յեգորկան, բոլորից առաջ եր թռչում:

Մրրկուտ ծովը վռոնում եր ու մռնչում: Սակայն «կարմիրների» նավերը հպարտ՝ դեպի առաջ ելին թռչում: Յուրաքանչյուր կարմիր նավատորմի ղալին, լուրաքանչյուր հրամանատար միայն մի բանի մա- սին եր մտածում. պարզորոշ և արագ կատարի իր գործը:

Զթոցեն, վոր մեքենան կանգնի:

Ելեկտրոմոտորները կարգին պահեն:

Նավը տանեն ուղիղ դեպի թշնամին:

Կրակեն անվրեպ:

Վորպեսզի ականներն անվրեպ դիպեն «կապուլտների» նա- վերին, «կարմիրների» ականանավերը վորքան կարելի լե մոտ ելին թռչում թշնամուն:

Արագ սլանալու ընթացքում, շրջվեցին: Հրամանատարները հրաման ելին տալիս:

Ծանր, բարեխղճորեն լուղված ականները շաշտունով դուրս ելին պրծնում գործիքների միջից, շրմփում ջրի մեջ և վազում:

«Կապույտ» նավերը պաշտպանվում էին, բոլոր թնդանոթներից արձակելով քաջ ականակիրների վրա: Սակայն ականակիրներն ել հետ չելին մնում: Բոմ, բոմ, բոմ, — պատասխանում էլին կարմիր բանակալիները «կապույտներին»:

Հիանալի տեսարան էր:

Բոլոր կարմիր նավատորմիղայինները թնդանոթների մոտ դասավորված էլին համարներով: Մեկը ումբ էր տալիս, մյուսն ումբըն անց էր կացնում թնդանոթի մեջ, յերրորդը փակում ու բացում էր թնդանոթի փականը, չորրորդը, հրետանու հրամանատարի հրամանով նշան էր առնում, հինգերորդը կրակում էր, վեցերորդը... բոլորին համբել շես կարող:

Յեթե դուք չերշանկուծյուն ունենաք կարմիր նավատորմիղային լինելու, կլինեք նավի վրա և ամեն բան կիմանաք:

Խոհարար Գլեբկոն թնդանոթի մեջ ումբեր էր դնում:

«Մարտական տազնապ» ազգանշանից հետո, խոհարար Գլեբկոն պետք է թողներ խոհանոցի աշխատանքը և, մարտական ցուցակի համաձայն, վազեր իր տեղը — թնդանոթի մոտ:


Ալիքները նրան վոտից մինչև գլուխ թրջում էլին, տատանումը նրան այս ու այն կողմն էր դրոշմ, բայց խոհարար Գլեբկոն ամուր մարդ էր — վոչ մի անգամ ումբըր թնդանոթի մեջ դնելը չուշացրեց:

Յեվ միայն այն ժամանակ, չերը ականակիրը, բաց թողնելով բոլոր ականները դեպի թշնամին, պաշտպանվելով հետ էր դառնում, խոհարար Գլեբկոն ճակատի քրտինքը սրբեց և մտածեց: «Իսկ ինչպե՞ս է իմ սան Յեգորկան խոհանոցում կովում»:

Իայց Յեգորկան ել չեր կովում: Նա միայն խոժոռում էր համազարկերի ձայներից, բարձրացնում էր թաթը և փնթփնթում:

Հանկարծ Յեգորկան զգաց, վոր գլխին մի ինչ վոր տաք ու մածուցիկ բան է թափվում: Յեգորկան քիթը ցցեց:

Արևածաղկի ձեթը թափվում էր նրա դնչի վրա: Յեգորկան



չեր ուզում թռչել ներքև, ջրի մեջ և նա համբերությամբ սպասում էր, զոր ձեթի կաթկթոցը վերջանա:

Դա անդգուշություն էր Յեզորկայի կողմից: Այն շիշը, վորը տատանումից ընկել էր և ձեթը թափվել էր Յեզորկայի վրա, այժմ այդ նույն շիշը կամաց գլորվեց դարակի վրայով և շրմփաց խեղճ արջուկի վրա:

Մըրիկը, հանդարտվելիս, բոլոր ուժերը հավաքեց և խփեց նավին: Նավը ծովեց կողքի վրա: Խոհանոցում դանակները, գդալները, շեփոնները թափվեցին: Յեվ ամենավերին դարակից խեղճ Յեզորկայի վրա ընկավ ալյուրով լիքը մի բանկա:

Յեզորկան միանգամից նմանվեց մի անհայտ գազանի կամ բանջարանոցի խրավիլակի, վորը դնում են աղւաթներին վախեցնելու համար:

«Կապույտները» նահանջեցին: Ականակիրները գործը փառավոր անցավ. ականների վրիպում չկար:

Նահանջի ճանապարհին «կարմիրները» ստորջրյա նավակներն

սպասում էին «կապույտ» նավերին, վոր ավարտեն հաղթանակը:

«Կարմիրները» ուժատարները, նահանջող «կապույտ» նավերի վրա, վերևից ուռնալով ելին թափում:

Հաղթությունը կատարյալ էր:

Անձնատուր չեղավ և ծովը: Ծովը, լերեի հասկացավ, վոր կարմիր նավատորմիդայիններին գրոհի սպառնալիքով չի սարսափեցնի և դեպի հանդարտ նավահանգիստը չի քշի:

Ծովը ելի մի քիչ ազմկեց, հետո կամաց-կամաց հանդարտվեց և շուտով սիրալիբ կերպով ճղփաց ականակիր նավի մոխրագույն լեզրերին: Կարծես ներդոլություն էր խընդրում իր չարության համար:

Չյուզած դռների նման ճռնչում ու կըռ-



կռում ելին վորորները, ճախրում ելին վերև և անտեղից քարի նման ընկնում ջրի մեջ:

Հոպ: Ձկնիկն ուշացավ և ընկավ վորորի կողմի մեջ, իբրև նախաճաշ: Մի ուշանա: Ծովի վրա ուշանալ չի կարելի:

Կովից հետո կարմիր բանակայինները հավաքվեցին ըստ մաս-նագիտության — մեքենայական խումբը՝ մեքենայական բաժնում, նազիտուկները՝ դինամո — մեքենայի մոտ, ական դնողները՝ ականային գործիքների մոտ, դեկավարները և աղդանշան տվողները՝ կամրջի վրա:

Արեգակի տակ նավը փայլվեց, կարծես թե հենց նոր ելին կառուցել:

Մյուս հրետավորների հետ, խոհարար Գլեբկոն էլ, թնդանովը կարգի բերեց, մաքրեց: Յեվ հենց վոր աշխատանքը վերջացրեց, լավեց հերթապահների փողերի ձայները:

— Հավաքվեցեք ընդհանուր սենյակը ժողովի, քննարկելու խաղաշարժի արդյունքները:

Խոհարար Գլեբկոն ճշտակատար կարմիր նավատորմիդային էր: Նա լվացվեց ու վազեց ընդհանուր սենյակը: Մինչև անգամ խոհանոց մտնելու ժամանակ չուռնեցավ:

Իսկ ժողովում մի անպիսի պատմություն սկսեց, վոր խոհարար Գլեբկոն Յեզորկային բոլորովին մոռացավ:

Նավի հրամանատարը զեկուցեց, վոր ականակիրը շատ լավ կատարեց իր մարտական գործը:

Սակայն հրամանատարը թույլ տեղեր էլ գտավ: Պարզվեց, վոր մի կարմիր նավատորմիդային, կովի ժամանակ վերադարձվեց, վոր մի կարմիր նավատորմիդային, Այսինքն նա մեռած ընկել է վազել առանց հակազդի և մեռել է: Այսինքն նա մեռած էր համարվում, վորովհետև չեթե խաղաշարժ չլիներ, այլ իսկական գազային գրոհ, նրա բանը լավ չեր լինի:


Պատի թերթի լույս տեսնելն ուշացել է: Հնոցապանները վատ են աշխատել, թեև մի վայրկյան: Նրանք վատ են հսկել հնոցներին և այն տեղն են հասցրել, վոր խողովակներից սև ծուխը քուլա-քուլա դուրս է լեկել:

Ըստ այդ ծխի, «կապույտները» «կարմիրները» նավերը կարող են ժամանակից առաջ նկատել:

Բայց այնուամենայնիվ հաղթությունը տարել են: Կարմիր նավատորմի ջոկատը տվեց, վոր նրան անպատրաստ դրուժյան մեջ չես կարող գտնել:

Յերբ նավի հրամանատարն այդ մասին հայտնեց ժողովին, հնչեց բարձր «ուռան»:

Հայտնի չե, թե ով առաջինը, բայց մեկը լերգեց «ինտերնացիոնալը»:



Հետո մի անգամ էլ կարմիր նավատորմի զայններն իրենց հրամանատարին «ուռա» գոչեցին և սկսեցին գլխարկները ծածկել:

Այդ ժամանակ կարմիր նավատորմի զայն Ուկրեյնին հրամանատարին ասաց.

— Ընկեր հրամանատար, թույլ տվե՛ք ասելու, վոր մեր նավում մի լերիտասարդ կարմիր նավատորմի զայն կա: Այդ լերիտասարդ նավատորմի զայնը ամբողջ կովի ընթացքում քնել է և տագնապի ազդանշանից հետո իր մարտական պոստում չի կանգնել: Նրա անունն է... Յեգորկա:

Բոլորը ծիծաղեցին, բայց հետո անհանգստացան:

— Ճիշտ է, իսկ ո՞ւր է արջուկը: Տղերք, մեր Յեգորկան կենդանի չե արդյո՞ք: Խոհա-

րա՛ր Գլեբկո, խոհարար Գլեբկո: Իսկույն զեկուցիր քո սանի մասին: Իսկ խոհարար Գլեբկոյի հետքն էլ չկար: Նա արագ, արագ ընթաց գնացքի պես, փնջալով վաղեց դեպի խոհանոցը: Վաղում եր ու գոռում:

— Յեգորկա՛, ահա լես: Յեգորկա՛, լես այստեղ եմ:

Խոհարար Գլեբկոն վաղելով մտավ խոհանոցը և հետ ու հետ դարձավ: Խոհանոցը ջրով լիքն էր: Ջրի մեջ լողում էլին գդալներ, շեր, գավաթներ:

Իսկ նստարանին հետևի վոտների վրա կանգնած եր ալյուրից և ձեթից պատրաստված մի ինչ վոր խրտվիլակ և մոնչում եր.

— Իյեեե — խխուռու: Ռուռ:

Խոհարար Գլեբկոն կանչեց կարմիր նավատորմի զայն Ուկրեյն կինին: Նրանք վերցրին փալասներ և ոճառ, կոնքը տաք ջուր լցրին և Յեգորկային նստեցրին ջրի մեջ: Թեև արջուկը փնթփնթում եր, ճանկոտում, բայց նրան լողացրին, սրբեցրին, վզին կարմիր բանտ կապեցին և բաց թողին տախտակամածի վրա, վոր զբոսնի:

Յեգորկան իրեն թափ տալով սկսեց ման գալ: Բարկացել եր, փնթփնթում եր և շուտ-շուտ դեպի խոհանոցն եր նայում:

Նայեց ռադիո-խողովակին, դուռնը կոխեց մեքենայի անցքը, պտտվեց ընդհանուր սենյակի սեղանի շուրջը, սանդուղքով բարձրացավ ազդանշանորդների կամուրջը:

Յեգորկայի համար վերև բարձրանալը հեշտ եր. արջերի առջևի վոտները կարճ են, լետևի վոտները լերկար, դեպի վերև արագ ու հեշտ են բարձրանում:

Սակայն կամրջից ներքև իջնելը Յեգորկայի համար դժվար եր: Առջևի վոտների կարճության պատճառով, նա գլխկոնծի տվավ:

Առաջվանից ավելի զայրացավ Յեգորկան. սկսեց նավով մին դուռալ:

Ազդանշանորդները նրան իջեցրին տախտակամածի վրա, իսկ նա շնորհակալություն ել հայտնեց:

Կարմիր նավատորմի զայնները լերբ իմացան, վոր Յեգորկան վողջ ու առողջ է, ծիծաղեցին:

— Յեգորկան կենդանի լե: Նավն է հետադուռում, վոր տեսնի:

հո անկարգութունն չկա: Զայրացած է, մըթմըթում է: Անպատճառ մեկն ու մեկին մի բան կանի:

Ճաշի ժամանակը չեկավ: Խոհարար Գլեբկոն կամպոտ եր պտուրաստել, աֆսալիսի համեղ ու քաղցր կամպոտ, վոր չեթե մի քիչ բերանումդ պահես, ել խոսալ չես կարող: շրթունքներդ իրար կկպչեն:

Խոհարար Գլեբկոն մի մեծ աման կամպոտ լցրեց և դրեց Յեգորկայի առաջին: Յեգորկան կամպոտը լակեց, պառկեց ու սկսեց հեկալ:

Նավի հրամանատարը չեկավ ու խոհարար Գլեբկոյին ասաց.

— Խոհարար, ընկեր Գլեբկո, ուր է քաջ Յեգորկան: Յես նրա համար մի կտոր շաքար եմ բերել, վոր ինձ մոտ — ընդհանուր սե-նյակը — չդա ու կռիվ չանի:

Հրամանատարը մի մեծ կտոր շաքար դրեց Յեգորկայի քթի առաջ: Յեգորկան միայն խեթ-խեթ նայեց, աֆսինքն թե շաքարդ հետ տար, կուշտ եմ:

Նավի հրամանատարն ուղեց հանաք անել, վերցնել իր ընծան, բայց Յեգորկան թաթով արագ շաքարը քաշեց, բերանն առավ ու տարավ խոհանոցը:

Հետո բարձրացավ վերև, արևի տակ պառկեց և սկսեց փըն-չացնել:

Իսկ նավը վազում եր ու վազում:

Կարմիր թռչունի նման փողփողում եր ռազմա-ծովային դո-շակը: Արագ ընթանալուց, նավի լետևի կողմին սպիտակ փրփուրը մոնչում եր:

Արդեն մոտենում էին հայրենի նավահանգստին:

Ճաշից հետո հերթապահութունից ազատ նավաստիները բար-ձրացան վերևի տախտակամածը: Հնչեց լարային լերաժշտախումբը, լավեցին ուրախ լերգերը:

Նավը վազում է ու վազում: Իր սուր քթով դանակի պես կըտ-րում եր ծովի լերկնագուլն քողը:

Կարմիր նավատորմիդային Ուկլեյկինը լենինի անկյունից վեր-ցրեց պատեֆոնը և տարավ վերին տախտակամածը: Դրեց քալեր-թի պլաստինկան և հենց այն է, ուզում եր բաց թողնել, չերբ մտածեց Յեգորկային պատեֆոնի մոտ բերել:

«Թող, ասում է, Յեգորկան բարձր քալերդ լսի: Գուցե թե պար դալ սովորի»:

Յերկար չմտածելով, Ուկլեյկինը Յեգորկային վերցրեց, դրեց ծնկների արանքում և պատեֆոնը դործի դրեց:

Պլաստինկան պտտվեց: Թշուր լավեց, կարծես թե ձուածեղ են անում: Յեգորկան վրդովվեց, քսքսվեց, ուղեց դուրս պրծնել, բայց Ուկլեյկինը ծնկները պինդ հուպ տվեց:

— Նստի՛ր, Յեգորկա, ընտելացիր քալերդին, թե չես մեղ հետ դորահանդեսին շարքում ինչպե՞ս կքալես:

Հանկարծ արկղից դուրս թռան ֆլեյտայի, փողի, լերաժշտա-խումբի պղնձե ծնծղանների ձայներ և թմբկի թնդուն:

— Տում-տուրուում: Տա-րա-րի: Չընդ-զընդ, բում:

Յեգորկան լերկուղից խոխոացրեց, մի արշինաչափ վեր թռավ, վազեց դեպի նավի լեզրը և ընկավ փրփրած ջրի մեջ: Յերկաց կարճ, կարծես կտրված պոչը, հարթ ներբանը կուշ ածած ճանկե-րով և... ալիքները ծածկեցին Յեգորկային: Ականանավն առաջ եր սլանում:

Այս բոլորն աֆսալես արագ կատարվեց, վոր կարմիր նավա-տորմիդայինները վոչինչ չկարողացան անել:

Խոհարար Գլեբկոն ուզում եր ջուրն ընկնել, բայց Ուկլեյկինը նրան պահեց.

— Ուր, Գլեբկո: Կխեղդվես, պտուտակի տակ կընկնես:

— Չե, լես շատ լավ եմ սուզվում ու լողանում: Թող, լես Յե-գորկային կազատեմ: Թե չես փորը ջուր կլցվի և չուզունի պես ծո-վի հատակը կգնա:

Կարմիր նավատորմիդային Ուկլեյկինը պատասխանեց.

— Մի վախենա: Յեգորկան այսոր այնքան կամպոտ է լափել, վոր նրա փորն ալլեա վոչինչ ընդունել չի կարող: Մին ել, հիմար դու. արջերը, թեև նավատորմիդում չեն ծառայում, բայց ինձա-նից ու քեզանից ել լավ են լողում:

Կամրջի վրա կանգնած ազգանշանորդը նկատեց, վոր մարդու նման մի բան ընկավ ջուրը: Նա ձայն տվեց, ինչպես ասում է կանոնադրութունն այդ դեպքում.

— Նավեզրից մարդ ընկավ:

Թնդաց հերթապան թնդանոթը: Հերթապան հրամանատարը ջուրը նետեց ազատարար ողակը և հրամայեց.

— Նստեցեք ազատարար նավակը: Նավակը բաց թողեք:

Ականակիրը մեքենաները կանգնեցրեց, հետադարձ ընթացք տվեց, կանգնեց:

Հերթապան խուժբը թռավ ազատարար նավակի մեջ: Կարմիր նավատորմի զայինները մի թափով նավակը թիավարների հետ միասին, բաց թողեցին ջրի մեջ:

Կարմիր բանակայինները միանգամից վերցրին թիերը, միանգամից թիավարեցին աջնալես, վոր նավակը ծովային վորորի նման առաջ սլացավ:

Ազատարար նավակն ավելի ու ավելի լեր մոտենում սև կետին: Կարմիր նավատորմի զայիններն աջնալես ուժեղ ելին թիավարում, վոր թիերը ծովում ելին: Թիավարողներն անհանգստանում ելին ընկերների համար: Յուրաքանչյուր թիավարող մտածում էր. «Տեսնես ո՞վ է ջուրն ընկել: Հո չի ջարդվել խեղճը: Գոնե կարողանա ջրի լերեսին մնալ, մինչև մենք հասնենք»:

Հանկարծ հրամանատարը, վոր նստած էր դեկի մոտ և վարում էր նավակը, ծիծաղից թուլացավ: — Ընկեր կարմիր նավատորմի զայիններ, մարդ չի ընկել ջուրը, մեր Յեգորկան է: Բայց ինչպես լավ է մնում ջրի լերեսին բլրոտը:

Յեվ խսկապես. Յեգորկան հին ծովագնացի նման էր մնում ջրի լերեսին: Ալիքները, ինչպես ճլորթու վրա, կամաց բարձրացնում և իջեցնում ելին Յեգորկային: Կողքից դուրս լեկավ մի սև փայլուն դելֆին և կրկին ջուրը մտավ:

Յեգորկան ուշադրութլուն չդարձրեց, լող էր տալիս ու փնչացնում:

Թիավարները Յեգորկային դրին նավակի մեջ: Ազատարար ողակն էլ հանեցին:

Նավակը վերադարձավ ալանակիրի մոտ: Ականակիրից լիսեռնապարաններ բաց թողին: Թիավարողները պարանի կեռերն ամրացրին նավակին: Կարմիր նավատորմի զայիններն առաջ բարձրաց-



րին նավակը նավի վրա, թիավարները և թըշված Յեգորկայի հետ միասին.

Խոհարար Գլեբկոն լերկար ժամանակ սրբում էր Յեգորկային, ախ եր քաշում և հայհոյում կարմիր նավատորմիդային Ուկլեյկինին:

Անբավական Յեգորկան փնթփնթում էր ու փռչտում: Ադի ջուրը հանդուգն ծովագնացին դուր չեկավ:

Նավը կրկին առաջ վազեց: Նավի հետևի մասում կրկին ջուրը լեռաց: Կրկին կարմիր դրոշակը, աստղի ճառագայթներով, վրան մուրճ ու մանգաղ, փողփողաց թարմ քամուց:

Տաք արևը շուտով չորացրեց Յեգորկային: Հավաքվեցին կարմիր նավատորմիդայիները, նայեցին Յեգորկային, խղճացին նրան և ասացին.

— Դե, Յեգորկա, ծանր հիվանդացար — առողջացար: Ծովային խեցգետինը հարձակվեց քեզ վրա — դու նրան ավագ նավատուն տվիր: Կովի մասնակցեցիր, ականագրոհի գնացիր — չվախեցար: Նավից ընկար — չխեղդվեցիր: Այժմ դու իսկական կարմիր նավատորմիդային ես:

Կարմիր նավատորմիդային Ուկլեյկինը ժպտավենով, վրան վուկե տառերով գրված իր գլխարկը դրեց Յեգորկայի գլխին:

Ձարմանքից Յեգորկան հետևի վոտների վրա կանգնեց: Խոհարար Գլեբկոն հանկարծ ջուրով նվազեց, բայց այնպիսի ուրախ, այնպիսի պարերգ, վոր Յեգորկան կանգնած տեղը քարացավ: Կարմիր նավատորմիդային Ուկլեյկինը բացականչեց.

— Ընկերներ, լավ նայեցեք, Յեգորկան ծիծաղում է:

Ճիշտ վոր. Յեգորկայի շրթունքներն այնպիսի ծիծաղելի կերպով ելին դասավորվել, վոր կարծես թե իսկապես արջուկը ժպտում էր:

Նավի հրամանատարն անցավ կարմիր բանակայինների այս ուրախ խմբի մոտով: Այս ուշագրավ պատկերը տեսնելով, գրքույկը հանեց և Յեգորկային նկարեց:

Շատ լավ նկար դուրս լեկավ: Ահա Յեգորկան գլխարկը գլխին կանգնած, ծիծաղում է:

Խնչպե՞ս է, լավ է:

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՎԻ ՎՐԱ

Գիշերը նավն զբաղվեց վարժական հրաձգութչամբ: Կրակոցի բոցը վառ բռնկումներով լուսավորում էր գիշերային մթությունը: Ծանր հրետանու համագարկերի թնդչունները կրկնվում ելին հեռու ծովում:

Թվում էր, թե մի հսկա, հորիզոնի այն կողմում գորգեր է թափ տալիս և վոչ մի կերպ չի կարողանում վերջացնել:

Նափն արձակում էր նշանակետերին, վոր չվրիպի այն դեպքում, լեթե թշնամին համարձակվի հարձակում գործել խորհրդային ծովային սահմանների վրա:

Նավի վողջ գորախումբը, հրամանատարից սկսած մինչև հսոցապանը, լարված աշխատում էր, վոր վնչ մի կրակոց իզուր չանցնի:

Բոլորը գործում ելին լուռ, աշխատելով պարզորոշ հասկանալ և կատարել իրենց ավագ ընկերների, հրամանատարների հրամանները: Նափն իրեն հարվածային էր հայտարարել և բոլորը հաստատուն կերպով վորոշել ելին մարտական պլանը կատարել:

Հաճելի լեր ճարպիկ կարմիր նավատորմիդայիների վրա նայելը:
Յուրաքանչյուրն իր գործը կատարում էր ճշտութչամբ, միայն համառոտ «լեստ» (կա) գոչով հայտնելով հրամանատարին, թե հրամանը կատարված է:
Ռումբերն առանց ուշանալու հասնում ելին թնդանոթներին

համազարկը հաջորդում էր համազարկին: Հրամանատարը և զինկոմը լուռ նայում էին իրար և գլուխները թափահարում:

— Ի՞նչ քաջ են: Ի՞նչ լավ կարմիր նավատորմի զայիններ են: Գիշերը նավը հաջող կրակեց: Համարյա վոչ մի վրիպում չտվին կարմիր նավատորմի զայինները:

Թող մի բուրժուները գան:

Յերբ փողհարները նահանջի ազդանշան տվին և վողջ նավին հեռախոսով հայտնվեց, վոր առաջարկութունը կատարված է և նավն արգարացրեց հարվածայինի կոչումը, խորհրդային նավի վրա վոչ մի կարմիր նավատորմի զային չգտնվեց, վոր չուրախանար իրենց հաջողությամբ:

Հնոցում, քրտնած ու կեղտոտ հնոցապանը, կարծես մոռացած, վոր չորս ժամ կանգնել է տաք հնոցի առաջ, թիակը գրկած ըսկեց պարել:

Համազարկերի վորոտները լռեցին: Նավը ճանապարհը փոխեց և դնաց հարազատ նավահանգիստը, արժանի հանգիստը մայելելու:

Մեքենաներն իրենց ընթացքը արագացնում էին: Նավն ամբողջովին դողում էր խիզախ վաղճից, ինչպես ցեղային ձին:

Նավի հետևում մոնչում էր պտուտակի առաջացրած փրփուրը, քամին սուլում էր պարանասարքի մեջ, թուցնելով կարմիր նավատորմի զայինների գլխարկները:

Ծովն աղի ջրակաթիլներ էր խփում հերթապահ ազդանշանորդների լեռեսին, սակայն նրանք աշալուրջ կերպով նայում էին առաջ:


Նավը հասավ նավահանգիստը, խարխալները ձգեց և բոլորը, բացի հերթապահներից, խոր քուռ մտան:

Միայն լեռեք նավասենյակում գտնվողները քնած չեցին:

Առաջինում հրամանատարը և զինկոմն ինչ վոր բանի մասին վիճում էին ու գրում:

Յերկրորդում կուսակցական կազմակերպութունը տալիս էր կոմունիստների այդ սրվա հաղթանակի հանրագումարը:

Յերրորդում կարմիր նավատորմի զայինները, հագիվ իրենց նինջը պահելով, պատի թերթն էին վերջացնում:



մանակ, չեմք արեգակը չորացնում եր տախտակամածն ու տաքացնում:

Յեգորիկան շատ լավ գիտեր, վոր այդ ժամանակ առավոտյան նախաճաշն եր:

Այդպես ել չեղավ:

Կարմիր նավատորմի ղալինները վերի տախտակամածը դուրս բերին պղնձե թեյամանները, գավաթները, շաքար, կարագ: Փռեցին մոմլաթե սփռոցները, այդ բոլորը նրա վրա դասավորեցին և սկսեցին ուտել, բայց այնպես, վոր այտուսկրները ճռճոռում ելին:

Սրատես, խորամանկ վորորները տախտակամածի վրա սպիտակ հաց տեսնելով, մոտեցան նավին և այնպիսի աղմուկ բարձրացրին, վոր ականջ եր խլանում:

Իսկ Յեգորիկային շաքարն եր հրապուրում: Սհա նա որորվելով ման ե գալիս, ձևացնելով, թե դրոսնելու չե դուրս չեկել, իսկ ինքը աչքի տակով նայում ե և հարմար բողբջին շաքարը — չը՛փփ — թաթով բերանն ե գցում ու ծկկում...

Այդ առավոտ վոչ մի վեճ չեր լինի, չեթե, վերջապես, կարմիր նավատորմի ղալինները, վորոնք վողջ գիշերն աշխատում ելին պատի թերթի վրա, թերթը դուրս չբերեցին ու չկախեցին վերևի տախտակամածի վրա:

Բոլորը խմբվեցին թարմ թերթի շուրջը և առաջին հերթին կարդացին, թե անցել ե հինգ տարի, ինչ Խարկով քաղաքի կոմյերիտականները վերցրել են նավի շեփուկները, թե կոմյերիտականներն ականակիրի պատվին տոն են կազմակերպում և հրավիրում են կարմիր նավատորմի ղալիններին տոնին ներկա լինելու, բայց այնպիսի նավատորմի ղալինների, վորոնք ըստ մասնագիտության ամենապատասխանատուները լինեն և կարմիր նավատորմի ղի մասին պատմեն սկզբից մինչև վերջ:

Հոգվածի վերջում նավի կոմյերիտամիության կազմակերպության կողմից գրված եր, վոր անհրաժեշտ ե այսոր պատգամավորներ ընտրել. թող լավագույնները Խարկով գնան:

Կարմիր նավատորմի ղալինները նստեցին նախաճաշի: Նրանք

չերկար մտածեցին, և վոչ մի կերպ չկարողացան գտնել, թե ով ե իրենցից լավագույնը, ըստ մասնագիտության և ով ամենից լավ գիտե նավատորմի ղի մասին:

Յեգորիկան այստեղ ել իրեն չկորցրեց: Զգալով, վոր իր վրա ուշադրութուն չեն դարձնում, չարաճճին մի ամբողջ գավաթ շաքար թոցրեց:

Տեղից վեր կացավ մի կարմիր նավատորմի ղալին, ընկերներին աչքի ածեց և հարցրեց.

— Կարելի՞ չե խոսել:

Կարմիր նավատորմի ղալինները պատասխանեցին.

— Ի՞նչ ե վոր, ընկեր, խոսի՛ր:

— Պետք ե մեր ղեկը վարող մասնագետներից կոմյերիտականների մոտ ուղարկենք: Զե՞ վոր մենք, ղեկակալներս ենք նավին ուղղութուն տալիս, հսկում ենք, վոր ծանծաղուտի մեջ չմտնի, քարի չհանդիպի, կամ մառախլապատ լեղանակին ուրիշ նավի չդիպչի: Ծովի խորութունն ենք չափում և ամբողջ պատասխանատվությամբ նավի ընթացքին հետևում: Փարոսների բոլոր լույսերին պետք ե ծանոթ լինենք: Նավն այնպիսի տեղ պետք ե կանգնեցնենք, վոր վոչ մի բանի չդիպչի, կիպ մոտենա պատին: Սխր նավն առանց մեզ ինչպե՞ս կարող ե գնալ: Մենք, ղեկակալներս, շատ պատասխանատու չենք, մեզ՛ել ուղարկեցեք:

Կարմիր նավատորմի ղալինները ղեկակալին վոչինչ չպատասխանեցին. նա, իր տեսակետից, ճշմարիտ եր ասում, միթե՞ այդպես չե:

Ղեկակալը միշտ կանգնած ե ղեկանիվի մոտ, անիվն այս ու այն





մթնում, ինչպես բուն ցերեկով, անձա-
րակ կլինեք: Ռումբերն ելեկտրակա-
նության միջոցով են մոտեցվում թնդա-
նոթներին, զանգակներն են զնգզնգում,
հեռախոսներն աշխատում: Հենց մեր մաս-
նագիտութունն է բարդ և պատասխա-
նատու: Դե թող մեկն ասի, վոր այդ-
պես չէ: Խնդրում եմ ելեկտրիկներին
ուղարկեք:

Կարմիր նավատորմիդայինները նրան
վոչինչ չպատասխանեցին: Իր տեսակե-
տից ելեկտրիկը ճշմարիտ էր: Միթե այդ-
պես չէ:

Ազդանշանորդը հիշելով, վոր իր մաս-
նագիտութունն ամենից շատ ելեկտրիկ-
ներից է կախված, ծոծրակը քորեց և
ուզում էր ելեկտրիկն ուղարկելու հա-
մար ձեռք բարձրացնել, բայց առաջ ան-

ցավ չորրորդ կարմիր նավատորմիդայինը և գոչեց.

— Այժմ մեքենավարին լսեցեք, ընկերներ: Յես մեքենայի ամե-
նամոտիկ բարեկամն եմ: Միթե մեքենան նավի սիրտը չէ: Չե՞ վոր
նա լե նավն առաջ, հետ և ուր հարկավոր է, շարժում: Յեթե մե-
քենան կանգնի, այն ժամանակ մենք ի՞նչ կանենք ծովի մեջ: Թե-
կուզ ձուկ վորսա: Խարխալը մեքենան է բարձրացնում: Յեթե հըր-
դեն պատահի, ո՞վ պիտի ջուր քաշի: Հետաքրքրական է հարցնել.
ի՞նչ կանի ընկեր ղեկակալը, յեթե ղեկի մեքենան — չիկ-չիկ-կանգ-
նի: Ուրեմն, պարզ է, վոր ամեն դեպքում նավին մեքենան է հար-
կավոր և մենք, մեքենավարներս, նավի ամենքից անհրաժեշտ և
պատասխանատու մարդիկն ենք: Ամենադժխավորն այն է, վոր կռու-
վում մեքենայից շատ բան է կախված: Յեթե մեքենան լավ աշխա-
տի, նավն արագ կշարժվի, թշնամու ուռմբերից քչերը կդիպչեն
նավին, թշնամու համար վատ կլինի: Դուք ի՞նչ ուզում եք, ասեք,

մենք ամենքից ավելի պատասխանա-
տու լենք:

Կարմիր նավատորմիդայինները նրան
վոչինչ չպատասխանեցին: Իր տեսա-
կետից նա ճշմարիտ էր: Միթե այդ-
պես չէ:

Համարյա թե վորոշել էլին մեքե-
նավարին ուղարկել, բայց առաջ լեկավ
խոհարարը:

Վեճի հենց սկզբին նա շերեփը ձեռ-
քին խոհանոցից դուրս լեկավ և բոլորը
լսեց: Խոհարարը վաղուց էր ուզում
ինչ վոր մի բան ասել, բայց ուշա-
նում էր և նրան ընդհատում էլին:

Այդպես ել այժմ: Հենց վոր նա բե-
րանը բաց արավ և արտասանեց.

— Յես...

Ինչ վոր մի ամուր ձեռք նրա ուսին
ափսպես խփեց, վոր խեղճ խոհարարը
շերեփը վալը գցեց և մինչև անգամ
պալկեց:

Բոլորը ծիծաղեցին և խոհարարին մի
կողմ հրելով, առաջ անցավ մի մրոտ, քրտինքի և ածուխի փոշու-
մեջ ամբողջովին կորած մի կարմիր նավատորմիդային: Նա հերթա-
պահութունը վերջացրել, գալիս էր, լսեց վեճը և մեջ ընկավ:

Հինգերորդ կարմիր բանակայինն ափսպես ժպտաց, վոր բոլո-
րը կարծեցին, թե ժպտացողը նեղը է:

— Մեքենավարներին լսելիս, — ասաց մրոտ կարմիր նավա-
տորմիդայինը, — իսկապես կարելի չէ կարծել, վոր առանց նրանց
նավը նավ չէ, այլ բալալակա*): Ահա լես քեզ, ընկեր մե-
քենավար, մի խնդիր կտամ: Ասա, խնդրեմ, ո՞վ է ստիպում մեքե-
նային, վոր շարժվի:

*) Յերաժշտական գործիք: Ծ. Թ.



Մեքենավարը, կարծելով, վոր գնալուց առաջ իրեն ուզում են ստուգել, ուրախ պատասխանեց.

— Գոլորշին, իհարկե: Գոլորշին է շարժում:

— Իսկ գոլորշին վորտեղից է մտնում մեքենայի մեջ:

Մեքենավարն ավելի ուրախ պատասխանեց.

— Կաթսաներից, մրոտ ախպեր:

Այդ ժամանակ հնոցապանը կարմիր նավատորմի ղալխներին աչքով արավ: — Ուրեմն, մենք, հնոցապաններս ամենապատասխանատուներն ենք: Յեթե մենք հնոցներին չհսկենք, գոլորշին կաթսաների մեջ չի գնա և մեքենան չի շարժվի: Այն ժամանակ նավը ծովի մեջ թիթեղյա դատարկ տուփի նման կտատանվի:

Բոլորը ծիծաղեցին: Մեքենավարի դեմքը սկզբում թթվեց, կարծես թե կիտրոն եր կուլ տվել և գլխարկը քթի վրա քաշեց, իսկ հետո չդիմացավ, ինքն ել ծիծաղեց և ասաց.

— Ինչ վոր ճիշտ է, ճիշտ է: Հակաճառել չեմ կարող: Յեկեք հնոցապանին ուղարկենք:

— Այ, աղպես, — ասաց հնոցապանը: — Յես իսկույն բաղնիք կգնամ, կլվացվեմ և պատրաստ ե: Բացի հնոցապաններից ուրիշ ով կգնա կոմերիտական տղաների մոտ: Մեր մասնագիտությունն ամենից ծանրն ու պատասխանատունն է: Ո՞վ ձեզանից չգիտե, վոր նավի տատանման ժամանակ ինչ որ ենք քաշում մենք: Նավը մեզ այս ու այն կողմն է շարժում, իսկ հարկավոր է ջեռացած հնոցների մեջ ածուխ լցնել, մին ել տեսար՝ կաթսայի հետ համըռվեցիր: Դե, բաղնիք գնամ, թե վոչ:

Կարմիր նավատորմի ղալխները հնոցապանին վոչինչ չպատասխանեցին: Իր տեսակետից հնոցապանը ճշմարիտ էր: Միթե աղպես չե:

Հնոցապանների մասնագիտությունը դժվար մասնագիտություն է, խոսք չկա: Աշխատել նավի հատակին, այնտեղից դուրս գալ քրտնած, կեղտոտ: Իսկ այժմ ածուխ վառելը նավատորմի դուռն է: Վորպեսզի թշնամին նավը շուտ չհալոտնաբերի, հնոցապաններն այնպես են աշխատում ածուխը, վոր ծուխ չի դուրս գալիս:

Հենց այն է կարմիր նավատորմի ղալխները բոլորովին վորոշել ելին հնոցապանին ընտրել, չերբ դուրս չեկավ խոհարարը և մինչև անգամ շերեփը թափահարեց:

— Յես ձեզ...

Ելի չթողին, վոր խեղճ խոհարարը խոսա: Կարմիր նավատորմի ղալխներից մեկը հանաքով նրան այնպես հրեց, վոր խոհարարը տաք թելամանի վրա նստեց և այնպես չրխկաց, վոր կարծես ձմերուկ շարդեցին:

Ինչպես հոհուացին կարմիր նավատորմի ղալխները, իսկ ազդանշանորդն՝ ամենից բարձր: Խոհարարին հրողն առաջ անցավ: Կարմիր նավատորմի ղալխներն առաջվանից ավելի բարձր ծիծաղեցին:

— Աս: Ծովի բնակիչ, ամենաթույլ նավաստի:

Բաց ինչ թույլ ծովագնաց եր առաջ անցել:

Յեթե բոլոր կարմիր նավատորմի ղալխներն ամրակազմ են ու արեվառ, լայնաթիկունք ու ամրավորտ, ապա այս մեկն ամենից ամուր եր: Կարծես թե տախտակամածի միջից մի լեռնաբարդ բուսավ, վորի ուտերի վրա լեթե հինգ մարդ կանգնի, կտեղավորվի:

Դուրս չեկավ, այնպես ծիծաղեց, վոր բոլորն ել ավելի ուրախացան և ասաց.

— Դու, ընկեր՝ խոհարար, ինձանից հետո կխոսես, վորովհետև դու լեռեկ բորշի մեջ աղ շատ եյիր լցրել: Լսեցեք, ընկեր նավաստիներ, թե ինչ կասի ձեզ սուգակը: Ձեր բոլորի աշխատանքն իմից թեթև է, վորովհետև դուք իսկական ող եք շնչում և ամբողջ ուրն արև եք տեսնում: Ձեր վողջ աշխատանքը տեսանելի չէ, իսկ մենք, սուգակներս, ինչ որ ենք քաշում ծովի հատակում: Այ, լեռեկ յես վախեցա:





Ի՞նչ ծովի հատակը: Պետք է
խորասուզված նավակը բարձ-
րացնել: Ոգնականներս իմ
գործիքն որորում, ինձ ող են
տալիս: Քայլում եմ ճահճա-
յին հատակով — ամեն ինչ
կարգին է: Հենց վոր սկսեցի
աշխատել, հանկարծ խավարից
մի ահագին բան բուսավ և
պինդ խփեց իմ պղնձե գլխին:
Դեհ, մտածում եմ. վերջս հա-
սել է: Չոքեցի և սկսեցի պա-
րանը քաշել, ոգնականներիս
ազդանշան տալ: Յերբ սկսե-
ցին բարձրացնել ինձ, այն
ժամանակ միայն տեսա, վոր
մի մեծ ձուկ վախից լե-
կել է ինձ դիպել: Մեր աշ-
խատանքն ամենքի աշխա-
տանքից ծանր է, բայց դրա

փոխարեն յես կոմյերիտականներին շատ բան կպատմեմ: Կպատ-
մեմ, թե ինչ է կատարվում ծովի հատակում, թե ինչպիսի ձկներ են
այնտեղ պարում, ծովի հատակում քանի խորասուզված նավեր
ու շոգենավեր կան: Սուզակները նավաստիների-նավաստիներն են
և նրանցից պատասխանատու մեկն էլ չկա:

Նավը լեթե ճեղքվածք ստանա, կսկսի խորասուզվել: Այս
դեպքում սուզակներն ամենակարևոր մարդիկն են: Կի՞նքն ջրի
տակ, ճեղքվածքը կգտնեմ, կկարկատեմ և կհասնի մեր խորհրդ-
դալին նավը մինչև իր նավահանգիստն ու կնորոգվի: Ուղարկվում եք
սուզակներին տոնին մասնակցելու, թե վու՛:

Կարմիր նավատորմիդայինները նրան վո՛չինչ չպատասխանե-
ցին: Սուզակն իր տեսակետից ճշմարիտ էր: Մի՞թե այդպես չէ:

Ինչ խոսք. սուզակի աշխատանքը վտանգավոր աշխատանք է:
Ամառ, ձմեռ նրանք ջրի տակ են աշխատում: Վորքան հարստու-
թյուն են նրանք հանել ծովի հատակից, քանի — քանի նավեր ու
մարդիկ են ազատել: Սուզակներին պետք է ընտրել

Կարմիր նավատորմիդայիններն արդեն ուզում էին քվեարկել
և ուղարկել սուզակին, մեկ էլ խոհարարը շերեփով խփեց թեյա-
մանին և շատ բարկացավ:

— Յես ձեզ բոլորիդ...

Բայց ելի խոսքը չվերջացրեց: Ազդանշանորդը վազեց խոհա-
րարի մոտ և փափաց:

— Ընկեր խոհարար, Յեգորկան խոհանոցում լեղած վողջ կամ-
պոտը լափել է, մոտենում է շաքարին:

Կարծես խոհարարի կրունկը կծեցին: Վեր թռավ և վազեց խո-
հանոց: Վաղում էր, վտանքը թափահարում և գոռում:

— Յեգորկա, պոչդ կկտրեմ: Յե-
գորկա, պոչդ կկտրեմ:

Համա ծիծաղեցին կարմիր նա-
վատորմիդայինները խենթավուն խո-
հարարի վրա: Մինչև անգամ վորորնե-
րը վախեցան ու նավից հեռու թը-
ռան: Ազդանշանորդը ծիծաղից թու-
լացած վայր ընկավ տախտակամա-
ծի վրա, ձեռքերով փորը սեղմեց և
հազիվ-հազ ծիծաղից լաց չեղավ:

Յերբ ծիծաղը քիչ հանդարտվեց,
դուրս յեկավ յոթերորդ կարմիր
նավատորմիդայինը ճարպիկ, բարե-
կազմ, աչքերը կկոցելով, կարծես
ուզում էր կրակել և ասաց.

— Խորհրդային նավերը գոյու-
թյուն ունեն պաշտպանութան, ու-
թյուն կուլի համար: Բոլորին հալանի
լե, վոր կուլի ժամանակ թնդանոթ-
յեք են արձակվում, իսկ մենք հրե-
տավոր ենք:



Առաջվանից ավելի բարձր ծիծաղեցին կարմիր նավատորմի զորայինները, վոտները տախտակամածին խփեցին և ծիծաղելու պատճառով, խոսալ չկարողացան:

Մինչև անգամ մեղուղաները լողալով մոտեցան նավին և նրանք ել յուրատեսակ ծիծաղեցին:

Իսկ արջուկ Յեգորկան, խոհարարի ձայնը լսելով, վաղելով մոտեցավ նրան, գլուխը թեքեց, թաթը մեկնեց և սկսեց պոռչները լիզել: Խենթավուն Յեգորկան կարծում էր, վոր խոհարարը նրան իսկույն մի համեղ բան կտա:

Կարմիր նավատորմի զորայինները ծիծաղեցին, ծիծաղեցին, և մտածմունքի մեջ ընկան:

— Ախր ճիշտ է դատում մեր ստամոքսի տերը:

Խոհարարը շատ բարկացավ, շերեփը թափահարում էր, գոռում ազդանշանորդի վրա:

— Դու հենց այդպես ուրախ ծիծաղում ես այն պատճառով, վոր լես ձեզ համար համեղ ճաշ եմ պատրաստում: Յես բոլորիցդ ել շուտ եմ վեր կենում: Դուք դեռ քնած եք լինում, իսկ լես արդեն խոհանոցումս եմ լինում, մթերք ջրկում և պատրաստում: Յեթե մեկը կա, վորի մասին բոլորը մտածում են ժամի 12-ից 10 ըռպե պակաս, ճաշից առաջ, այդ լես եմ: Մինչև անգամ Յեգորկան, վոր գազան է, նա ել է իմ մասին մտածում: Յեթե լես հիվանդանամ դուք ի՞նչ կանեք առանց ինձ: Լսեցեք, ընկերներ, թե ինչ եմ ասում ձեզ: Հնոցապանի լվացվելու համար շատ ժամանակ է հարկավոր, նա մրտ է, իսկ լես իսկույն շորերս կփոխեմ և ուղարկեցեք ինձ թեկուզ լերեք տոնակատարության — մեր փառավոր ականակիրը չեմ խայտառակի: Այ, ընկեր գրագիրն ինձ համար իսկույն փաստաթուղթ կգրե: Նդպես, չե՞, ընկեր գրագիր:

Գրագիրը ծխախոտը ծխեց, մնացորդը գցեց տակառիկի մեջ և պատասխանեց:

— Վո՛չ, չեմ տալի:

Խոհարարը զարմանքից մինչև անգամ բերանը լայն բաց արավ:

— Վո՞նց թե չեմ տալի:

— Իսկ դու առանց փաստաթղթերի միթե՞ զնալ չես կարող: Խոհարարը ձեռքերը հետ տարավ, վիրավորվեց:

— Առանց փաստաթղթերի լես վո՞նց կգնամ, չեն ել թողնի վոր նավից հեռանամ:

Գրագիրը լռեց, լռեց ու ասաց:

Դուքս է գալիս, ընկերներ, վոր լես ամենապատասխանատուն եմ և վոր ինձ պետք է ուղարկե՞լ տոնին:

Կարմիր նավատորմի զորայինները նրան վաչինչ չպատասխանեցին: Իր տեսակետից նա ել ճշմարիտ էր: Միթե՞ այդպես չէ:

Թեև նրա աշխատանքն աննկատելի լե, սակայն առանց նրան ինչպե՞ս կարելի լե: Գրագիրն ամբողջ ուր չխկչխկացնում է մեքենան, հրամաններ, ամեն տեսակ փաստաթղթեր է տպում: առանց գրագրի մինչև անգամ արձակուրդ չես կարող գնալ: նաև ճանապարհի համար լիտեր է գրում. տո՛ւկ, տո՛ւկ — գնա արձակուրդ, ընկեր, բոլոր փաստաթղթերդ կարգին են:

Կարմիր նավատորմի զորայինները նստած մտածում էլին: Շուտով բանվորական ուր կսկսվի, ել ընտրության մասին մտածեն անգամ ավելորդ է — քո բրիգադից լես մի՞ քնա, ուրիշ վոչինչ:

Տես, թե ինչ խոչընդոտ դուքս լեկավ:

Ո՞վ է ամենից լավը, մասնագիտությամբ պատասխանատու և միաժամանակ կարմիր նավատորմի զորային մասին ամեն բան գիտե:

Այս ժամանակ խոսեց մի կարմիր նավատորմի զորային ել, տասն-բթի կաշին բոլորովին թափվել էր:

— Ինձ, շարքայինիս ել լսեցեք, ընկերներ: Յես չեմ խոսի իմ շարքային մասնագիտության մասին, թեև այդ մասնագիտությունը ծանր է և պատասխանատու:

Մենք պետք է ծանոթ լինենք բոլոր ճախարակներին, ճոպաններին, խարիսխներին — բոլորը համբել չես կարող: Իմ մասնագիտության մասին ել չեմ խոսի: Այդ մասնագիտությունը մյուս գիտության մասին ել չեմ խոսի: Նրանցից վատ է, վոչ լավ, մասնագիտությունների նման է — վոչ նրանցից վատ է, վոչ լավ, բայց անհրաժեշտ է: Նավում, ինչպես և գործարանում, յուրաքան-

չյուրը մասնագետ ե: Առանց մասնագիտութեան մարդը նալի վրա խոչընդոտ ե:

Միայն թե նավատորմիդում յուրաքանչյուր մասնագիտութեան մեջ կա և հատուկ մասնագետ — հարվածային:

Բացի լավագուցն հարվածայիններէից ունի կարելի չե ուղարկել կոմիւրիտականների տոնին: Կոմիւրիտականների տոնը հենց ներանց տեղն ե:

Այս ժամանակ բոլոր կարմիր նավատորմիդայինները վտաքի լեյան և միաձայն գոչեցին.

— Կեցցե նավատորմիդի հերոսները — հարվածայինները:

— Հարվածայիններին ուղարկենք համալուծար: Նրանք ամենից լավ են և մասնագիտութեամբ պատասխանատու:

Յեզորկան, կարծելով, վոր նորից սկսվում ե նալի մաքրումն ու սարքավորումը, թագնվեց ցանցի մեջ: Յերբ աղմուկը դադարեց, ցանցից դուրս լեկավ և նստեց խոհարարի առաջ:

Կարմիր նավատորմիդայինները լսեցին, վոր մեկը վերեից ծիծաղում ե: Գլուխները բարձրացրին ու տեսան, վոր նալի հրամանատարն ու կոմիսարը, կամըջի վրա կանդնած ծիծաղում են:

Կոմիսարն ասաց.


— Առանց ընդհատելու չես բոլորիդ ուշադրութեամբ լսեցի: Լսեցի, թե ինչպես բոլորդ ել ձեր մասնագիտութեան մասին անհանգստանում եք: Դուք իսկական գիտակից կարմիր նավատորմիդայիններ եք: Այդպիսի նավատորմիդայիններ ունենալու դեպքում վոչ մի թշնամի սարսափելի չե: Զիշտ ասաց շարքային կարմիր նավատորմիդայինը. դուք բոլորդ ել հարկավոր եք նալին և բոլորդ ել արժանավոր եք: Իսկ ամենահարկավորները մեր լերկրում հարվածայիններն են: Ի՞նչ կոմիւրիտական տոն կլինի առանց հարվածային կարմիր նավատորմիդայինների: Յեկեք մի այսպիսի լողունգ հայտարարենք. ով հարվածային չե նա կարմիր նավատորմիդային չե: Ո՞վ ե համաձայն, վոր լավագուցն հարվածայիններին ուղարկենք կոմիւրիտականների տոնին:

Բոլորը ձեռք բարձրացրին, իսկ խոհարարը միշտ անգամ լերկու ձեռքը բարձրացրեց:

Այդ ժամանակ փողահարները դրոշակը բարձրացնելու ազդանշանը տվին:

Շարվեցին բոլոր կարմիր նավատորմիդայինները և հրամանատարները ու նալեցին դեպի նալի լետևի կողմը:

Իսկ այնտեղ, դրոշակաձողի վրա, բարձրացավ ալ դրոշակը, քամուց ծածանվեց և բոլորը տեսան խորհրդային հնգաթև աստղը:





1881

923



2903

28 20
29 10

